«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿՏՈՐ՝ Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ 2
1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 2
1.1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....................5
1.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....................12
1.3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....................25
2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 27
3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....................48
4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 52
4.1. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ....................52
4.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԿԱՊԵՐ 56
5. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ....................57
6. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....................60
6.1. ԿՐԹԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ....................60
6.2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ 61
6.3. ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԳՐԱՊԱՀԱՐ 62
7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 64
8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ....................66
8.1.ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ....................66
8.2.ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՔՈԼԵՋ....................67
ՀԱՎԵԼՎԱԾ....................72

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության ներկա հանրային-տնտեսական զարգացման իրավիճակում նոր մարտահրավերներ են առաջացել տնտեսության բացառապես բոլոր ոլորտներում: Կարևորագույններից մեկը կրթության ոլորտն է՝ իր առջև դրված խնդիրներով և զարգացման գործընթացի մեջ ներգրավված լինելու անհրաժեշտությամբ:

Հովի. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանը, ավելի քան կեսդարյա ուսումնամանկավարժական և գիտահետազոտական գործունեության լավագույն փորձն ընդունելով որպես հենք, ուղղակիորեն արձագանքելով ժամանակի մարտահրավերներին, ստանձնում է համակարգաստեղծ դերակատարություն՝ ստեղծելով ուսումնական, կրթական, գիտական և նորարարական համակարգ:

Համալսարանի գործունեության նպատակն է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված մատուցվող ծառայությունների կազմակերպումը՝ դիմակայելով 21-րդ դարի մարտահրավերներին, հնարավորություն տալով ուսանողներին՝ ստանալու բարձրորակ կրթություն, իսկ գործատուներին՝ ունենալու որակյալ մասնագետներ:

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համալսարանն իր գործունեությունը 2019 թվականից մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը իրականացրել է՝ ղեկավարվելով միջնաժամկետ (գործողությունների) պլանով: Վերջինս ներկայացվել է հոգաբարձուների խորհրդի քննարկմանը. եղել են տարբեր մոտեցումներ (ըստ հոգաբարձուների խորհրդի մի շարք անդամների կարծիքի՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը իրավասու չէր նախապատրաստելու ռազմավարական պլան) և առաջարկներ ինչպես կառուցվածքի, այնպես էլ բովանդակային կողմի առնչությամբ: Ապրիլի 2-ից համալսարանի զարգացման և ռազմավարական քայլերի մեկնարկային հիմքը դարձել է ռեկտորի «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման ռազմավարությունը»:

2020 թվականին հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ՎՊՀ նոր կառուցվածքը՝ ըստ որի՝ փոփոխություններ եղան տարբեր ստորաբաժանումներում (տե՛ս *Հավելված*), որի հետևանքով 5 ֆակուլտետի փոխարեն ունեցանք 3 ֆակուլտետ՝

- հումանիտար գիտությունների,
- հասարակագիտական գիտությունների,
- բնական գիտությունների:

Մասնագիտությունների խմբավորումը ֆակուլտետներում առաջարկվել է՝ հիմք ընդունելով ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության (բակալավրի ու անընդհատ և ինտեգրված) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը, որտեղ մասնագիտություններն իրենց դասիչով ներառված են ոլորտային խմբեր:

Փոփոխություններ կատարվեցին նաև ամբիոնների ցանկում, որի հետևանքով 15 ամբիոններից ձևավորվեց 8-ը: Կարևոր խնդիր էր ըստ կառուցվածքային փոփոխությունների համալսարանի կրթական ծրագրեր ընդգրկված դասընթացների (ներառյալ միջոլորտային դասընթացները) ամրագրումը համապատասխան ամբիոնների կողմից դասավանդվող առարկայացանկում: Հիմք ընդունելով կրթական ծրագիր ներառված դասընթացների վերջնարդյունքները և կոմպետենցիաները՝ սահմանվեցին դասընթացների նոր դասիչներ, որոնք ընդգրկված են համապատասխան ամբիոնի պատասխանատվության շրջանակներ:

Վարչական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումներում ևս կատարվեցին փոփոխություններ:

Համալսարանում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, ստեղծվել են հաստիքային նոր միավորներ, կատարվել են բաժինների միավորումներ և վերակազմակերպումներ, որի հետևանքով կրճատվեց 57 աշխատող: Իսկ հաստիքների վերանվանման կամ միավորման հետևանքով 89 աշխատակից փոխադրվեց այլ աշխատանքի (ներքին շարժ): Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր են կնքվել 28 անձանց հետ, որոնց թվում կան նաև նախկին աշխատակիցներ: Թափուր 3 աշխատատեղ համալրվել է հարցազրույցով ընդունված նախկին աշխատակիցներով:

Հաստիքների միավորման, կրճատման հետևանքով վարչատնտեսական անձնակազմի 36 աշխատակիցներից շարունակում են աշխատել 17-ը: Կրճատվեցին հավաքարարների հաստիքներ, սակայն աշխատանքների առավել արդյունավետ կազմակեպման նպատակով որոշ հավաքարար-աշխատակիցների հետ կնքվեցին ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր:

Նոր կառուցվածքով հաստատված մեկ ստորաբաժանում՝ Ս. Մերգելյանի անվան հեռանկարային հետազոտությունների կենտրոնը, որի ստեղծման նպատակներն են գիտահետազոտական աշխատանքների կատարման միջավայրի ստեղծումը, կարգավորումն ու ուղղորդումը, դեռևս չի գործում: Սակայն ուղղվածության հստակեցումից հետո առաջիկայում 2021 թ. այն անպայմանորեն կիրականացնի իր գործառույթները:

Համալսարանի գիտական, կրթական, վարչական գործընթացների կառավարման համար շատ կարևոր է ներքին իրավական դաշտի կարգավորումը: Ժամանակը, նաև ՀՀ օրենսդրական դաշտի, ԿԳՄՍ նախարարության ստեղծած կարգերի և կանոնակարգերի փոփոխությունները թելադրում են թե՛ նոր կարգերի ստեղծում, թե՛ գոյություն ունեցող

կարգերի փոփոխություն: Կառավարման գործընթացը հստակ, ճկուն և ոչ ռիսկային է լինում միայն ներքին իրավական դաշտի ճշգրտությամբ:

2020 թվականին կատարվել է 16 կարգի, կանոնակարգի փոփոխություն կամ նոր հաստատում: Փոփոխվել են՝

1. «Բալային-վարկանշային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգը»
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրմում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները»,
3. «Դպրոցականների ասմունքի մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգը»,
4. «Դպրոցականների լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգը»,
5. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամում դպրոցականների օլիպիադաների իրականացման կանոնակարգը»,
6. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի համագործակցության և կապերի բաժնի կանոնադրությունը»,
7. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան ուսանողներին և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը»,
8. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները»,
9. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի գործավարության կարգը»,
10. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ռեկտորին առընթեր ֆինանսատնտեսական հանձնաժողովի կանոնակարգը»,
11. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը»:

Նոր հաստատված կարգերն են՝

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտատեղեկատվական կենտրոնի կարգը»,
2. «Հետազոտողի պատրաստման, կրթական ծրագրով ասպիրանտուրայի ընդունելության, հայցորդության ձևակերպման ընթացակարգը»,
3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի և հայցորդության) գիտակրթական ծրագրով

ուսումնական գործընթացի կազմակերպման, գիտակրթական ծրագրի կառուցվածքի կանոնակարգը»,

4. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը». նորովի հաստատում:
5. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

Համալսարանը, դեռ 2015 թվականից սկսած, աշխատանքներ է կատարել պաշտոնի անձնագրերի ստեղծման ուղղությամբ, որոնք հաստատվել են 2018 թվականին ռեկտորի հմ. 160 Լ/Կ հրամանով: Հոգաբարձուների 2020 թվականի մայիսի 16-ի թիվ 36-Լ որոշմամբ հաստիքացուցակով սահմանված նոր միավորների գոյացումն առաջադրեց պաշտոնի անձնագրերի մի մասի փոփոխության և նորերի ստեղծման խնդիրը (85 անձնագիր):

Բոլոր անձնագրերը ստեղծվել կամ փոփոխվել են՝ համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 872-Ն հրամանով հաստաված «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչների»:

1.1.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների կառավարման համար առաջնահերթային է ուսումնական պլաններից բխող ժամաքանակի ճիշտ հաշվարկը:

Ժամաքանակն անմիջականորեն պայմանավորված է ակադեմիական խմբերի և ենթախմբերի թվով, իսկ վերջինս՝ ուսանողների թվով: Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրությունը, ստորաբաժանումներից մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության հայտարարության առաջարկները (մասնագիտական ամբիոնի պահպանման առաջնահերթության կարևորմամբ) բերում են բարդ իրավիճակի, և ռիսկերն ավելի մեծ են լինում:

2020 թվականին 1727 ուսանողի առկայության պայմաններում ձևավորվել է 166 խումբ, 177 ենթախումբ: Խմբերում ուսանողների թիվը տատանվում է 2-20-ի միջակայքում: Առկա ուսուցման համակարգում մինչև 10 ուսանողով ձևավորված խմբերը 30-ն են (բակալավրիատ), իսկ հեռակա ուսուցման համակարգում վիճակն ավելի մտահոգիչ է:

Աղյուսակ 1. Ուսանողների թվաքանակը՝ ըստ ձևավորված խմբերի

Խմբերն ըստ ուսանողների քանակի	*Բակալավրի կրթական ծրագիր*		*Մագիստրատրոսի կրթական ծրագիր*
	Առկա ուսուցման համակարգ	*Հեռակա ուսուցման համակարգ*	
1- 5	13	17	10
6-10	17	28	11
11- 15	17	10	3
16- 20	12	6	
21 և ավելի	18	4	
Ընդամենը	77	65	24
	166		

Նման փոքրաթիվ խմբեր ունենալը ֆինանսական շատ մեծ ռիսկ է, չնայած որ լսարանային գործնական աշխատանքի խմբի համար սահմանվել է 20 ուսանող, իսկ լաբորատոր աշխատանքների համար՝ 15: 2015-2016 ուստարում ներդրված ուսումնական պլանների մեջ շաբաթական ժամաքանակը բակալավրիատում միջինացված 25 է, իսկ մագիստրատուրայում՝ 20: Սա չի հակասում ԿԳ նախարարի 2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի» 4.1.5-րդ կետին. «Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-30 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ»:

Մագիստրոսական ծրագրերում կուրսի ձևավորման համար 8-10 ուսանողը կարելի է համարել բավարար, որովհետև այդ թվաքանակով ուսանողներից ձևավորված կուրսը կարելի է համարել բավարար ինքնածախսածածկման տեսանկյունից: Հարցը համակողմանի ուսումնասիրելու նպատակով յուրաքանչյուր մասնագիտության և ուսուցման համակարգի համար ուղղակի և անուղղակի ծախսերի հաշվարկման մեթոդաբանությամբ ստեղծվել է վարձավճարների հաշվարկման համակարգ, որը դեռևս քննարկման փուլում է:

Վերջին տարիների ընդունելությունից ակնառու է, որ հանրության կողմից թույլ է պահանջարկը «Քիմիա», «Ռադիոֆիզիկա», «Լրագրություն», «Երաժշտական կրթություն» մասնագիտությունների նկատմամբ, ինչի հետևանքով էլ խմբերը միշտ թերալրված են:

2020-2021 ուսումնական տարում ներդրված 44 կրթական ծրագրերից (առկա՝ բակալավրիատ – 31, մագիստրատուրա – 13) ուսումնական պլաններից բխող ընդհանուր ժամաքանակը կազմել է 106398 ժամ, որից լսարանայինը՝ 83332 (78.3%), վերջինից էլ դասախոսությունը՝ 27536 :

Աղյուսակ 2.Ամբիոնների ժամաքանակը

Հ/հ	Ամբիոնի անվանումը	I կիս. լսարանային	II կիս. լսարանային	Ընդամենը /լսարանային/	Ընդհանուր ժամաքանակը
1	օտար լեզվի և գրականության	8580	7540	16120	18713
2	հայոց լեզվի և գրականության	3976	4048	8024	9964
3	մանկավարժության և հոգեբանության	6245	5941	12186	16673
4	արվեստի և սպորտի	4128	3980	8108	9923
5	պատմության	3058	2920	5978	7831
6	տնտեսագիտության, իրավունքի և կառավարման	4450	5280	9730	13936
7	քիմիայի և կենսաբանության	5236	5258	10494	13296
8	մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	6462	6230	12692	16064
ԸՆԴԱՄԵՆԸ		42135	41197	83332	106398

Արդի կրթության կազմակերպման համատեքստում կարևորվում է գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներին տրվող ժամաքանակի մեծացումը՝ որպես հմտությունների և կարողությունների զարգացման խթան: 2015-2016 ուսումնական տարում ներդրված կրթական ծրագրերի ուսումնական պլաններում «դասախոսություն և գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանքներ» հարաբերակցությունը մոտ է 50:50-ի, միայն «Պատմություն» և «Իրավագիտություն» մասնագիտություններում է փոքր-ինչ մեծ դասախոսությունների տեսակարար կշիռը. այդ հարցը կքննարկվի առաջիկայում, քանի որ 2021-2022 ուսումնական տարում ներդրվելու են նոր պլաններ: Ընդհանուր ժամաքանակի հարաբերակցության վրա ազդում են ուսումնական պլան ներառված բացառապես «գործնական» պարապմունքներ ունեցող դասընթացները (համահամալսարանական «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու», «Ռուսաց լեզու», «Համակարգչից օգտվելու հմտություններ», «Մարմնակրթություն», նաև «Երաժշտություն» և «Կերպարվեստ» դասընթացները, որոշ մասնագիտական դասընթացներ), որոնք փոխում են պատկերը (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Ուսումնական պարապմունքների տեսակների հարաբերակցությունն ուսումնական պլաններում

Ուսումնական պարապմունքի տեսակը	Ըստ ժամաքանակի		Ըստ տոկոսների
Դասախոսություն	27 536	27 536	33%
Գործնական	40 552	55 796	67%
Սեմինար	5 992		
Լաբորատոր	9 252		
Ընդամենը	83 332		

Պետք է նկատել, որ կրթական համակարգում նման հարաբերակցությունը վատ ցուցանիշ չէ:

Ժամաքանակի մեջ ներկայացված չեն միայն խորհրդատուներին, ամբիոնի ղեկավարմանը, քննական խորհրդատվություններին, ինքնուրույն աշխատանքներին տրված ժամերը:

2020 թ. ապրիլ-մայիս ամիսներին փոփոխություններ կատարվեցին «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման» կանոնակարգում: Հաստիքների ձևավորումը սովորաբար կատարվում էր երկու մոտեցմամբ՝ ընդհանուր և լսարանային ժամաքանակ: 2020-2021 ուսումնական տարվա համար հաստիքները հաշվարկվեցին ընդհանուր ժամաքանակի կտրվածքով. վերջինիս մեջ փոփոխված է լսարանային (անմիջական շփման) ժամաքանակի տեսակարար կշիռը: Սանդղակն այսպիսին է.

Աղյուսակ 4. Դասախոսների տարեկան բեռնվածքը

Պաշտոնի անվանումը	***2019-2020 ուստարի (ընդհանուր ժամաքանակ)***	***2020-2021 ուստարի (ընդհանուր ժամաքանակ)***
պրոֆեսոր	700-750	700
դոցենտ	950-1000	800
ասիստենտ	950-1000	850
դասախոս	950-1000	900

Սրա շնորհիվ, ելնելով տարակարգերի ձևավորման մեթոդից, 2020-2021 ուսումնական տարում հնարավոր էր օգտագործել պրոֆեսորի և դոցենտի 59.7, ասիստենտի 30, դասախոսի 35 հաստիք (պրոֆեսորի և դոցենտի հաստիքները համատեղում ենք, քանի որ

պրոֆեսորի կոչում ունեցողները շատ քիչ են), ընդհանուր առմամբ՝ 129.7 հաստիք (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Ամբիոնների հաստիքները

Հ/հ	Ամբիոնը	Ընդհանուր հաստիք	պրոֆեսոր	դոցենտ	ասիստենտ	դասախոս
1	պատմության	9.6	3.1	2.8	2.4	1.4
2	տնտեսագիտության, իրավագիտության և կառավարման	17.3	5.1	3.4	4.5	4.3
3	քիմիայի և կենսաբանության	16.2	4.1	3.5	4.8	3.8
4	մանկավարժության և հոգեբանության	19.8	4.9	5.1	5.8	4.0
5	արվեստի և սպորտի	12.1	2.2	2.2	4.1	3.6
6	հայոց լեզվի և գրականության	12.1	3.0	3.1	3.6	2.4
7	օտար լեզվի և գրականության	23.0	3.4	4.2	8.6	6.8
8	մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	19.6	4.8	4.9	5.7	4.2
Ընդամենը		**129.7**	**30.6**	**29.2**	**39.5**	**30.5**

Սակայն քանի որ «Երաժշտություն» կրթական ծրագրի 1 ուսանողի հաշվարկը արտահայտվում է ժամաքանակի մեջ, նշված հաստիքներին ավելանում է ևս 2.5 հաստիք (արվեստի մասնագիտություններին 3.2 ուսանողի համար տրվում է 1 հաստիք՝ ըստ նախարարության չափորոշիչների): Ըստ այդմ՝ օգտագործվել է մոտ 133 հաստիք:

Առ 2021 թ. հունվարի 1-ը տեղակայվել է 131.37 հաստիք (հաշվարկի մեջ ժամավճարով տրված 8247.50 ժամը վերածված է 8.55 հաստիքի): Հաստիքների գերածախս համալսարանի կտրվածքով չի կատարվել, սակայն կան ամբիոններ, որտեղ պրոֆեսորի և դոցենտի հաստիքներն ավելի շատ են (պայմանավորված է նախկին ժամաքանակով. նոր մրցույթների ժամանակ խնդիրը հաշվի է առնվում). տատանումը (ավելցուկ) 4.41 է, իսկ ասիստենտի և դասախոսի հաստիքների գերակշռությամբ ամբիոններում առկա է 3.79 հաստիքի թերալրում:

Կարող ենք փաստել, որ ռիսկերը հաշվի են առնվել, և հաստիքների օգտագործումը ճիշտ է:

Իհարկե, ունենք ցավոտ խնդիր. որոշ ամբիոններում կան դոցենտի կոչում ունեցողներ, որոնք ասիստենտի հաստիք են զբաղեցնում, և նրանց տեղափոխումը դոցենտի հաստիքի այս պահին տարբեր առումներով հնարավոր չէ:

Աղյուսակ 6. Դոցենտի կոչում ունեցող, ասիստենտի հաստիք զբաղեցնող աշխատակիցների թվաքանակը

Հ/հ	Ամբիոն	Դոցենտի կոչում ունեցող, ասիստենտի հաստիք զբաղեցնող աշխատակիցների թվաքանակը
1.	Հայոց լեզու և գրականություն	4
2.	Օտար լեզուների և գրականություն	2
3.	Պատմություն	1
4.	Մանկավարժության և հոգեբանության	3
5.	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	2
6.	Արվեստի և սպորտի	5
7.	Քիմիայի և կենսաբանության	7
8.	Մաթեմատիկայի և Ինֆորմատիկայի	1

2021 թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանում աշխատում է 221 դասախոս, որից 135-ը (61 %) ընդգրկված է հիմնական համակազմում, 86-ը աշխատում է համատեղությամբ (այդ թվում՝ ներքին) և ժամավճարով:

ՀՀ-ում գործող լիցենզիայի օրենքի պահանջը լիովին ապահովված է:



Նկար 1. Պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական և համատեղությամբ աշխատող համակազմի հարաբերակցությունը

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից դոկտորի աստիճան ունի 12-ը, գիտությունների թեկնածուի՝ 114-ը, պրոֆեսորի կոչում ունեն 11-ը, դոցենտի կոչում՝ 108-ը:



Նկար 2. Համալսարանում գիտական աստիճան, կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի թվաքանակը

Այս կտրվածքով ևս լիցենզիայի պայմանները բավարարված են, քանի որ գիտական աստիճան և կոչում ունեցողների թիվը կազմում է պրոֆեսորադասախոսական համակազմի 62.4 %-ը, իսկ հիմնական համակազմում՝ 80,9 %-ը:

Առանձին ամբիոնների առումով առկա են շատ բարձր ցուցանիշներ: Սակայն ունենք արդեն վտանգավոր շեմին մոտեցող ամբիոններ (ընդհանուր համակազմի կտրվածքով):



Նկար 3.Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճան և կոչում ունեցողների թիվն արտահատված տոկոսով

Որոշակի խնդիրներ կան (ամբիոնների կառուցվածքային փոփոխությունից հետո) օտար լեզուների և գրականության, տնտեսագիտության, իրավունքի և կառավարման ամբիոններում: Հիմնական աշխատակազմում գիտական աստիճան և կոչում ունեցողների ամենացածր տոկոսը 52.3 է (Օտար լեզուների և գրականության ամբիոն), մինչդեռ որոշ ամբիոններում այն 90 %-ից ավելի է.

- Հայոց լեզվի և գրականության ամբիոն - 100%
- Արվեստի և սպորտի ամբիոն – 94.4%
- Քիմիայի և կենսաբանության ամբիոն – 94.7%

Չնայած այս գոհացուցիչ իրավիճակին՝ կան անհանգստացնող իրողություններ՝ դասախոսների տարիքային սանդղակ, որոշ գիտաճյուղերի (մաթեմատիկա, քիմիա, տնտեսագիտություն, իրավագիտություն)՝ գիտական աստիճան ունեցողների համար խնդիրներ ապագայում:

2020 թվականի ընթացքում գիտական աստիճան և կոչում ստացողներ չենք ունեցել, չնայած որ ունենք երիտասարդ դասախոսներ, ովքեր աշխատում են թեկնածուական ատենախոսության վրա, հանձնել են մասնագիտական և ոչ մասնագիտական քննությունները, հրատարակել են պահանջվող թվով հոդվածներ: Առաջիկա 1-2 տարիների ընթացքում սպասելի են նրանց աշխատանքների արդյունքները (ատենախոսությունների պաշտպանություններ): Կան նաև մասնագիտական խորհուրդների հետ կապված որոշ խնդիրներ:

1.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թվականին Վանաձորի պետական համալսարանի համախառը նախահաշվի մուտքերը կազմել են 873 մլն 541 հազար 900 դրամ, որից 34 մլն 170 հազար 100 դրամը նախորդ տարվա մնացորդն է: Նախահաշվը եկամուտների մասով կատարվել է 104,5 տոկոսով: Վերջին երկու տարվա ընթացքում զգացվում է ուսման վճարներից գոյացած գումարների աճ, որը պայմանավորված է ցածր վարձավճարով ուսանողների ավարտելով և ավելի բարձր վարձավճարով ուսանողների ընդունելությամբ, ինչպես նաև ամեն տարի ընդունվող ուսանողների թվի պահպանման կամ աճի դրական ընթացքով:



Նկար 4. 2016-2020 թթ. համախառը բյուջեն

2020 թվականին Վանաձորի պետական համալսարան հիմնադրամի բյուջեի եկամուտները գոյացել են՝

- 60,4 %՝ վճարովի ուսուցման ծառայություններից,
- 19,2 %՝ պետական բյուջեի ֆինանսավորումից,
- 0,4 %՝ շարունակական կրթության դասընթացներից,
- 11,4 %՝ հենակետային վարժարանի համար պետբյուջեի ֆինանսավորումից,
- 5,5 %՝ քոլեջի վճարովի և անվճար համակարգերի ուսուցումից,
- 0,4 %՝ այլ մուտեքերից,
- 2,7 %՝ շնորհներից:



Նկար 5. 2020 թվականի եկամուտներ

2020 թվականին Համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի միջոցների հաշվին կատարվել են 752 մլն 339 հազար 400 դրամի ծախս: Հաստատված նախահաշվի համեմատ ծախսերը կատարվել են 93,7 տոկոսով: Ծախսերի գերակշռող մասը՝ 88,9 %-ը, բաժին է հասել աշխատավարձին: Աշխատավարձ/ծախսեր ցուցանիշի բարձր թիվը պայմանավորված է ծախսային այլ հոդվածների թերակատարմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է Covid-19 համավարակով: Համալսարանի նախահաշվի աշխատավարձի հոդվածը գերակատարվել է 0,9%-ով:

Կապիտալ ներդրումների առումով 2020թ-ին կատարվել են ՎՊՀ Գր. Լուսավորչի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ՝ 8 մլն 782 հազար ՀՀ դրամի չափով:



Նկար 6. Հիմնարար ներդրումների ծավալը 2016-2020 թթ.

Աղյուսակ 7. 2020թ. ծախսերի բաշխվածությունը՝ ըստ ծախսային հոդվածների

հ/հ	Անվանումը	Ընդամենը	Ճամբիներ	Քոլեջ	Վարժարան	ԲՈՒՀ	Փաստացի ծախս	Փաստացի ծախսի %
1	աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ	663169,6	16066,4	27826	82826	542277	668995,4	100,9
2	գույք և սարքավորումներ	2700					0	0,0
3	դեղորայք և վիրակապական նյութեր	200		30	101,4	1020	1151,4	575,7
4	սննդամթերք	350				244,7	244,7	69,9
5	այլ ծախսեր	53000	294,6	885,8	1134,6	17782,7	20097,7	37,9
6	գործուղումներ	6800					1574,2	23,2
a	դրամաշնորհներ	3000	1124,2				1124,2	37,5
b	հիմնադրամ	3800		0	14	436	450	11,8
7	տրանսպորտ, սպասարկում և փոխադրում[1]	1250		0	0	801,9	801,9	64,2
8	կապ	4800		110	180	2695,5	2985,5	62,2
9	էլեկտրաէներգիա	13700		749	1606	6695,5	9050,5	66,1
10	վառելիք (գազ)	10000		690	1345	5894,4	7929,4	79,3
11	ջրմուղ	4000		224	439	1582,9	2245,9	56,1
12	այլ կոմունալ ծախսեր[2]	700		30	45	298,4	373,4	53,3
13	հարկեր և տուրքեր	500				2400	2400	480,0
14	ներկայացուցչական ծախսեր	2200				299,7	299,7	13,6
15	սարքեր և սարքավորումներ	7300	932,5	422,5	423,7	3159	4937,7	67,6
16	կապիտալ ներդրումներ և շինարարություն	11350			7882	900	8782	77,4

[1] Տրանսպորտային սպասարկում և փոխադրում տողի խնայողությունը կազմել է 35,8% կամ 448,1 հազ. ՀՀ դրամ:
[2] Կոմունալ ծախսերի առումով թերածախսը կազմել է 34% կամ 10 մլն 615 հազար 300 ՀՀ դրամ:

17	կրթաթոշակ կզմսն	21284,7		5253,5	90	15126,5	20470	96,2
18	կրթաթոշակ բուհ					1440	1440	
ԸՆԴԱՄԵՆԸ		**803304,3**	**18417,7**	**36220,8**	**96086,7**	**603054,2**	**752339,4**	**93,7**

Հ/Հ	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	ՊԼԱՆ	ԾԱԽՍ	ՏՈԿՈՍ
1	մամուլ	400,0	215,5	53,9
2	գիրք (դասագրքեր, ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, գեղարվեստական, գիտական գրականություն)	1 500,0	312,3	20,8
3	գրենական պիտույքներ, թուղթ	3 300,0	1 468,1	44,5
4	ընթացիկ նորոգումների համար շինանյութ և ծառայություն	2 000,0	795,8	39,8
5	տնտեսական ապրանքներ (հանդերձանք, անկողնային պարագաներ, ցուցանակ. և այլն)	2 000,0	704,4	35,2
6	նյութեր ուսումնական գործընթացի համար, թունանյութեր, պարարտանյութեր, սպորտային պարագաներ	1 300,0	512,5	39,4
7	տպագրական ծախսեր, այդ թվում ուսանողական տոմսեր, ստուգման գրքույկներ	6 300,0	1 354,0	21,5
8	դիպլոմներ	1 900,0	1 844,6	97,1
9	պրակտիկայի պայմանագրեր դպրոցներում և այլ հաստատություններում	2 500,0	1 107,5	44,3
10	անշարժ գույքի, մարզադահլիճների վարձակալության պայմանագրեր	2 000,0	775,0	38,8
11	պարտադիր բուժզննություն, առողջապահական սոցծրագրեր, բժիշկ-մասնագետների ծառայություններ	800,0	200,0	25,0
12	ինտերնետ կապի համար	1 000,0	1 820,0	182,0
13	ֆինանսական գործունեության և դրամաշնորհների աուդիտ	2 600,0	1 476,0	56,8

14	սարքավորումների նորոգում և սպասարկում[3]	7 725,0	756,7	9,8
15	կադրերի որակավորման բարձրացման, սեմինարների մասնակցության, ծրագրերի ձեռքբերման համար	1 500,0	50,0	3,3
16	պահուստային ֆոնդ(չնախատեսված ծախսեր, օգնության ֆոնդ աշխատակիցների, ուսանողների համար, ղեկավարի ֆոնդ)	1 935,0	1 800,0	93,0
17	այլ պայմանագրեր (գումարի վերադարձ, միջոցառումներ, գույքի գնահատում, թարգմանություններ և այլն)	8 000,0	807,5	10,1
18	լրատվամիջոցներ, գովազդ, հայտարարություն	1 300,0	536,0	41,2
19	արտաքին գրախոսության ծառայություններ	500,0	0,0	0,0
20	համակարգչային ծրագրային փաթեթներ և տեղեկատվական համակարգեր	1 040,0	545,5	52,5
21	հավատարմագրման գործընթացների համար	3 500,0	1 958,4	56,0
22	ֆինանսական և ապահովագրական, շինարարությանը առնչվող,տեսչական, լիցենզիայի տրամադրման և այլն	1 000,0	982,9	98,3
23	գրագողությունը հայտնաբերող առցանց էլեկտրոնային ծրագրերից օգտվելու համար	100,0	10,0	10,0
24	ուսանողական գիտական ընկերությանը	400,0	0,0	0,0
25	ուսանողական խորհրդին	400,0	65,0	16,3
ԸՆԴԱՄԵՆԸ		**55 000,0**	**20 097,7**	**36,5**

[3] Ծախսերի «Այլ ծախսեր» հոդվածի 14-րդ տողի՝ սարքավորումների նորոգման և սպասարկման խնայողությունը պայմանավորված է հիմնադրամի կարիքների համար այդ ծառայությունները սեփական ուժերով ու միջոցներով կազմակերպելու հանգամանքով: Այլևս արտաքին սպասարկողների հետ չեն կնքվում պայմանագրեր: Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը վերազինվել է համապատասխան սարքավորումներով և նյութերով, որի շնորհիվ հնարավոր է եղել խնայել շուրջ 7 մլն դրամ:

1.Աշխատավարձի հոդվածի 0.9% գերածախսը պայմանավորված է շնորհների աշխատավարձերով և քոլեջի անձնակազմի լրավճարով :

2. 2020թ-ի համար նախատեսված գույքի փաստացի ծախսը կատարվել է 2021թ-ի հունվար ամսին:

3.Դեղորայք և վիրակապական նյութեր հոդվածը գերակատարվել է Covid-19 համավարակով պայմանավորված բժշկական սարքերի, դեղերի և անձնական հիգիենայի պարագաների ձեռքբերումով:

4. Գործուղումներ հոդվածի թերակատարումը կապված է Covid-19-ով:

5. Տրանսպորտ, սպասարկում և փոխադրում տողի խնայողությունը պայմանավորված է այն համզամանքով, որ այսուհետ բուհի տրանսպորտային կարիքների համար օգտագործվում են ոչ թե բուհի ենթակայության տրանսպորտային միջոցները, այլ գնումների գործընթացի շրջանակներում կնքված պայմանագրերով ձեռքբերված վճարովի տրանսպորտային ծառայությունները: Շնորհիվ դրա՝ տնտեսվել են 2 վարորդի աշխատավարձ, վառելիքի ձեռքբերմանն ու ավտոմեքենաների սպասարկմանն ուղղված միջոցներ, ապահովագրական ծախսեր և այլն: Սրա հետևանքով կնքված վճարովի ծառայությունների գործող պայմանագրերի շրջանակներում հիմնադրամը իր հասանելիության տիրույթում մշտապես ունի թեթև մարդատար ավտոմեքենաներ և միկրոավտոբուսներ:

6.Կապ, էլեկտրաէներգիա, վառելիք, ջուր, այլ կոմունալ ծախսեր հոդվածների թերակատարումները հիմնականում պայմանավորված են ուսումնական գործընթացի առցանց կազմակերպմամբ:

7. Համալսարանի պահուստային ֆոնդից 600 հազար ՀՀ դրամ աջակցություն է ցուցաբերվել Արցախյան երկրորդ պատերազմում զոհված ՎՊՀ 4 ուսանողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 150 հազար ՀՀ դրամ:

Աղյուսակ 8 . 2020 թ. նախահաշվի ծախսերը

հ/հ	***Ծախսային հոդվածներ***	***Գումար /հազ. դրամ/***
1.	աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ	668 995,4
2.	դեղորայք և վիրակապական նյութեր	1 151,4
3.	սննդամթերք	244,7
4.	այլ ծախսեր	20 097,7
5.	գործուղումներ դրամաշնորհ	1 124,2
6.	գործուղումներ բուհ	450
7.	տրանսպորտ, սպասարկում և փոխադրում	801,9

8.	կապ	2 985,5
9.	էլեկտրաէներգիա	9 050,5
10.	վառելիք (գազ)	7 929,4
11.	ջրմուղ	2 245,9
12.	այլ կոմունալ ծախսեր	373,4
13.	հարկեր և տուրքեր	2 400
14.	ներկայացուցչական ծախսեր	299,7
15.	սարքեր և սարքավորումներ	4 937,7
16.	կապիտալ ներդրումներ և շինարարություն	8 782
17.	կրթաթոշակ ԿԳՄՍՆ	20 470
18.	կրթաթոշակ բուհ	1 440
ԸՆԴԱՄԵՆԸ		752 339,4

2020 թ.-ին հիմնադրամի կրթական միջավայրի զարգացման համար կատարված ծախսերի ծավալը կազմում է 15 մլն 300 հազար 300 ՀՀ դրամ:

1. Սարքեր և սարքավորումներ 4937,7 հազար դրամ,
2. Կապիտալ ներդրումներ և շինարարություն 8782 հազար դրամ,
3. Ընթացիկ նորոգումների համար շինանյութ և ծառայություն 705,8 հազար դրամ,
4. Նյութեր ուսումնական գործընթացի համար 512,5 հազար դրամ,
5. Կադրերի որակավորման բարձրացման համար 50 հազար դրամ,
6. Գրքեր 312,3 հազար դրամ:

Աղյուսակ 9. ՎՊՀ 2020 թ.-ի նախահաշվի կատարողականը՝ ըստ ծախսային հոդվածների և տոկոսային արտահայտության

	Անվանումը	Նախահաշիվ	Կատարողական	Տոկոս	Մնացորդ
1	աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ	548375	542277	98,9	6098
2	գույք և սարքավորումներ	700	0	0,0	700
3	դեղորայք և վիրակապական նյութեր	160	1020	637,5	-860
4	սննդամթերք	350	244,7	69,9	105,3
5	այլ ծախսեր	46500	17782,7	38,2	28717,3
6	գործուղումներ	3675	436	11,9	3239
7	տրանսպորտ, սպասարկում և փոխադրում	1250	801,9	64,2	448,1
8	կապ	4500	2695,5	59,9	1804,5
9	էլեկտրաէներգիա	10700	6695,5	62,6	4004,5
10	վառելիք (գազ)	7300	5894,4	80,7	1405,6
11	ջրմուղ	3700	1582,9	42,8	2117,1
12	այլ կոմունալ ծախսեր	480	298,4	62,2	181,6
13	հարկեր և տուրքեր	500	2400	480,0	-1900
14	ներկայացուցչական ծախսեր	2200	299,7	13,6	1900,3
15	սարքեր և սարքավորումներ	6000	3159	52,7	2841
16	կապիտալ ներդրումներ և շինարարություն	8350	900	10,8	7450
17	կրթաթոշակ ԿԳՄՍՆ	13379,7	15126,5	113,1	-1746,8
18	կրթաթոշակ բուհ	1920	1440	75,0	480
	Ընդամենը	660039,7	603054,2	91,4	56985,5

ՎՊՀ աշխատավարձը 2016-2020 թթ.

2020 թ.-ին վերանայվել են ՎՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ և վարչատնտեսական անձնակազմերի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, որի հետևանքով էականորեն փոփոխվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմ/այլ անձնակազմ(վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական) աշխատավարձերի ֆոնդերի հարաբերակցությունները: Մասնավորապես ամսական կտրվածքով մոտ 2 մլն դրամով ավելացել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի ֆոնդը: Բուհի աշխատավարձի ֆոնդը մնացել է նույնը:

2020 թ.-իհամար հարաբերակցությունը կազմել է՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ՝ 64,2%, այլ անձնակազմ՝ 35,8%: Հետագայում՝ 2021թվականին այդ հարաբերակցությունը առավել նկատելի փոփոխություններով կարտահայտվի՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ ՝70%, այլ անձնակազմ՝30%:

Աղյուսակ 10. ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային նոր դրույքաչափերը

Հ/հ	*Հաստիքի անվանումը*	*Պաշտոնային նոր դրույքաչափ (դրամ)*
1.	պրոֆեսոր	310 000
2.	դոցենտ	250 000
3.	ասիստենտ	190 000
4.	դասախոս	130 000

Աշխատավարձի (ներառյալ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ) ծավալը 2016-2020 թթ.-ին:



Նկար 7. Աշխատավարձի (ներառյալ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ) ծավալը 2016-2020 թթ.

Համալսարանի աշխատակիցներին 2020 թ.-ին վճարվել է 0,8, Հենակետային վարժարանին՝ 2, Քոլեջին՝ 0,5 լրացուցիչ աշխատավարձեր:

2020 թվականի աշխատավարձի վերլուծությունն ըստ ստորաբաժանումների ունի հետևյալ տեսքը:



Բուհ 81%	Հենակետային վարժարան 12,4%	Քոլեջ 4,2%	Շնորհներ 2,4%
542 277	82 826	27 826	16 066

Նկար 8. 2020 թվականի աշխատավարձի վերլուծություն

Համալսարանի աշխատակիցների միջին ամսական թիվը կազմում է 407 մարդ, նախորդ տարվա 475-ի փոխարեն:

2020 թ.-ին ընդունված նոր հաստիքացուցակի և աշխատավարձերի վերանայմամբ համալսարանի աշխատավարձի հիմնադրամը հիմնականում մնացել է նույնը, նախորդ տարիների համեմատությամբ փոփոխվել է Պրոֆեսորադասախոսական անձնակազմ/Այլ անձնակազմ համաբերակցությունը:

Աղյուսակ 11. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ/Այլ անձնակազմ համաբերակցությունը

Տարակարգ	***2016***	***2017***	***2018***	***2019***	***2020***
պրոֆեսորադասախոսական անձնակազմ(%)	62,2	62,6	61,3	63,0	64,2
այլ (%)	37,8	37,4	38,7	37,0	35,8

2020 թ.-ին Համալսարանը որդեգրել է սպառողական բյուջեից զարգացման բյուջեի անցնելու քաղաքականությունը, այդ միտմանն ուղղված հիմնական քայլերից մեկը հիմնադրամի կարիքների համար կազմակերպվող գնումների գործընթացի մեխանիզմների համապատասխանեցումն է ՎՊՀ իրական կարիքներին: Մասնավորապես՝ շեշտը դրվել է ֆինանսական ռեսուրսների խնայողության, ծախսերի նպատակայինության, գործընթացի անխափանության ու շարունակականության ապահովման վրա: Գնումների պլանի ձևավորման գործին ներգրավվել են հիմնադրամի ստորաբաժանումների ղեկավարները, ինչը բարձրացնում է կատարվող ծախսերի արդյունավետությունը: Խնայված միջոցները կուղղվեն հիմնադրամի զարգացման ծրագրերին, ուսումնական միջավայրի, բուհի նյութատեխնիկական բազայի վերազինմանը:

Աղյուսակ 12. Աշխատավարձի ծախսեր

Անձնակազմ	2016		2017		2018		2019		2020	
	գումար	տոկոս	գումար	տոկոս	գումար	տոկոս	գումար	տոկոս	գումար	տոկոս
պրոֆեսորադասախոսական անձնակազմ	366 592,8	62,2	388 703,9	62,6	362 343,2	61,3	347 466,8	63,0	347 946,3	64,2
վարչական անձնակազմ	126 487,5	21,5	135 280,2	21,8	133 082,5	22,5	116 737,0	21,2	111 006,9	20,5
ուսումնաօժանդակ անձնակազմ	36 992,4	6,3	36 175,6	5,8	34 963,0	5,9	31 217,8	5,7	30 471,6	5,6
վարչատնտեսական անձնակազմ	59 290,4	10,1	60 398,9	9,7	60 995,4	10,3	56 182,0	10,2	52 852,2	9,7
Ընդամենը՝	589 363,1	100,0	620 558,6	100,0	591 384,1	100,0	551 603,6	100,0	542 277,0	100,0



	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Բյուջե	843726.6	825552.1	763175.9	692720.1	702488.2
Աշխատավարձ	590646.6	608912.7	591593.7	551603.6	542 277.0
Մասնաբաժին	70%	74%	78%	80%	77%

Նկար 9.ՎՊՀ աշխատավարձ և բյուջե հարաբերակցությունը

1.3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թվականին բարելավման որոշակի աշխատանքներ են կատարվել շենքերի պահպանման, տարածքի առավել ճիշտ օգտագործման, կարողությունների առավել նպատակահարմար օգտագործման համար:

Վարժարանը գտնվում էր 3-րդ մասնաշենքում, որն արդեն դասասենյակների, լաբորատորիաների բարելավման խիստ կարիք ուներ: Նախկին պայմաններում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաները չէին կարող գործել, գործելու դեպքում էլ բավարարել ներկայացվող պահանջները: Ռեկտորատի նիստում ներկայացվեց ֆինանսական վերլուծություն, որի հիման վրա որոշում կայացվեց վարժարանը տեղափոխել Գրիգոր Լուսավորչի 47 հասցեում գտնվող մասնաշենք: Կատարված աշխատանքների շնորհիվ 2020 թ. սեպտեմբերի 15-ին վարժարանի վերանոգված մասնաշենքը ընդունեց աշակերտներին (ֆինանսական ներդրումը 8782 հազ. դրամ): Պայմաններն այսօր բավարար են, սակայն 2021թ-ի համար նախատեսվում են իրականացնել շարունակական բարելավման աշխատանքներ:

2019 թ. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից կատարված ստուգումներով վերհանվել և ակտում նշվել էին անվտանգության պայմաններին չբավարարող մի շարք թերություններ: Ամենամեծ ֆինանսական բեռը կապվում էր Ս.Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնի հետ, քանի որ այն հրդեհավտանգ էր: 2020թ-ին այդ կենտրոնի սարքերն ապամոնտաժվել են, և դրանցով համալրվել են ֆակուլտետային համակարգչային լսարաններ՝ ներքին ցանցով և ինտերնետ կապի հասանելիությամբ: Առաջիկայում նախատեսվում է անդրադառնալ նաև ուսումնական շենքերի հակահրդեհային անվտանգության ապահովման համակարգին. 2021թ-ից կսկսվի այդ խնդրի փուլային լուծումը:

Ավելացվել է համալսարանի համացանցի արագությունը 50մբ-ից դառնալով 200մբ, որը մինիմալ անհրաժեշտ արագությունն է:

Moodle համակարգի սերվերային մոդուլին անհրաժեշտ համացանցի արագությունը համարժեք է պայմանական 50մբ-ի:

Bigbluebutton կոնֆերանսի համար նախատեսված սերվերային մոդուլին անհրաժեշտ համացանցի արագությունը համարժեք է պայմանական 50-100 մբ-ի:

Համալասարանում օգտագործվող համացանցի անհրաժեշտ արագությունը, որը ստացվել է տարիների վիճակագրության հիման վրա, համարժեք է պայմանական 50մբ-ի: Նոր արագությունը ճիշտ բաշխելու և ղեկավարելու համար ձեռք է բերվել և ներդրվել է mikrotik մասնագիտացված սերվերային մոդուլ:

Պատրաստվել է քարթրիջի մաքրման և լիցքավորման կայան, որը հնարավորություն է տալիս արագ մաքրել և լիցքավորել քարթրիջները, խնայելով ժամանակ և միջոցներ: Կայանի

պատրաստման համար ծախսվել է 521034 դրամ, ներառյալ տեխնիկական սարքավորումները, անհրաժեշտ նյութերը և պատրաստող մասնագետի աշխատավարձը:

Նախկինում 1 քարթրիջի լիցքավորման արժեքը կազմում էր 3500 ՀՀ դրամ: Մեկ ամսվա ընթացքում լիցքավորվում է 18-20 քարթրիջ: Գումարը կազմում էր շուրջ 70.000 ՀՀ դրամ: Այժմ 1 քարթրիջի լիցքավորման արժեքը կազմում է 1760 ՀՀ դրամ /ներառյալ լիցքավորող աշխատակցի աշխատավարձը/: Այսինքն լիցավորման ծախսերը կրճատվել են շուրջ 50 %-ով: Կրճատված լիցքավորման ծախսերի հաշվին 1 տարվա ընթացքում կփակվի կայանի պատրաստման ծախսերը:

Առանձին տեղակայությամբ ձևավորվել է նաև Արմաթ լաբորատորիան:

Բավականին աշխատանքներ են կատարվել շենքերի (հատկապես լսարանային տարածքի) լամինատե հատակների փոփոխության (250 քառ.մ) ուղղությամբ:

Ուշադրություն է դարձվել սանտեխնիկական սարքավորումների, ջրամատակարարման ներքին ցանցի, Բազումի ուսումնամարզական հանգրվանի ներքին ինժեներական ցանցերի և կաթսաների կարգաբերման և սպասարկման բոլոր աշխատանքներին:

Բազումի ուսումնամարզական հանգրվանում աշխատանքներ են իրականացվել և լիովին նախապատրաստվել է արտազաղթած շուրջ 70 արցախցի ընդունելու և կեցությունը ապահովելու համար:

Ռազմական դրության պայմաններում նախապատրաստվել, մասամբ գույքով ապահովվել են Համալսարանի մասնաշենքերի նկուղային հարկերը, որոնք հարմարեցվել են ապաստարաններին ներկայացվող պահանջներին:

Սկսվել են արխիվի՝ նոր տարածք տեղափոխվելու աշխատանքները:

Covid12 համավարակի պայմաններում ապահովվել են տարածքի ախտահանման աշխատանքները, բացի այդ, վերահսկողություն է սահմանվել ջերմաչափմանը Համալսարանի տարածք մուտք գործելիս:

Համալսարանը ներգրավված է ERASMUS + PRINTeL և ArmDoct ծրագրերում, որոնք կարևոր դեր ունեն ենթակառուցվածքների տեխնիկական համալրման գործընթացում:

Մասնավորապես, 2020թ. նշված ծրագրերի շրջանականերում ձեռք է բերվել գույք, որով կահավորվել են լսարաններ.

Աղյուսակ 13. 2020թ. ERASMUS + PRINTeL և ArmDoct ծրագրերի շրջանակներում ձեռքբերված սարքավորումներ

Հ/հ	Սարքավորման անվանումը
PRINTeL	
1.	տեսալուսանկարչական ստուդիայի լուսավորման սարքերի հավաքածու
2.	թվային անլար աուդիո համակարգ պրեզենտացիաների և դասախոսությունների համար

3.	բարձրախոսով, աուդիո ինտերֆեյսով և հակավիբրատորով աուդիո ստուդիայի հավաքածու
4.	ստուդիայի ձայնամեկուսիչ ակուստիկ վահանակների հավաքածու
5.	մոնիթորի պրոֆեսիոնալ արտաքին ականջակալ ստուդիայի համար
ArmDoct	
6.	համակարգիչներ
7.	թվային պրոյեկտորներ
8.	էկրաններ
9.	ինտերակտիվ գրատախտակ

Վերոնշյալ սարքավորումների ցանկն արդեն հուշում է, որ դրանք հնարավորություն են ընձեռում ձևավորել լսարաններ (թիվ 4, 7, 301), կազմակերպել առցանց դասեր (Zoom լսարաններում), նկարահանել տեսադասեր, նաև հեռարձակել բաց դասեր:

Հաշվետու տարում գրադարանում առանձնացվել և համապատասխանաբար կահավորվել է հատուկ աշխատասենյակ՝ նախատեսված պրոֆեսոր-ասպիրանտ խորհրդատվական հանդիպումների անցկացման համար:

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի պետական համալսարանի առաքելությունն է պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ:

2020թ. Covid-19 համավարակը կանգնեցրեց բարդ խնդիրների առջև. առաջացավ անհրաժեշտություն հաստատված ուսումնական գործընթացի ժամանակացույցը 2020 թվականի մարտի 18-ից սկսած վերանայել և կարգավորել: Բոլոր կարգավորումներն ամրագրվել են ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի, այնուհետ ռեկտորի հրամաններով: Կրթական գործընթացը (դասավանդում, ուսումնառություն, գիտելիքների ստուգում) նշված ժամանակահատվածից սկսած կազմակերպվել է առցանց ուսուցման գործիքներով՝ Zoom, Moodle: 2020 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ունեցել ենք երեք դասախոս, ովքեր առողջական լուրջ խնդիրներով եղել են ռիսկային դաշտում, ուստի նրանք օգտվել են անվճար արձակուրդի իրենց իրավունքից: Հեռակա ուսուցման համակարգի նստաշրջանի ժամանակ (հունիս-հուլիս ամիսներ) նոր խնդիրներ չեն առաջացել:

Ուսանողության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում կատարվել են օպերատիվ հարցումներ՝ գնահատելով առցանց դասավանդող դասախոսների կարիքները (համապատասխան սարքեր, ինտերնետ կապ և այլ խնդիրներ) և դրանք նույն օպերատիվությամբ լուծվել են: Ուսանողներից և դասախոսներից 30-ը դիմել են համակարգիչ ստանալու, 3-ը՝ ինտերնետ կապ ապահովելու համար: Համակարգիչներ են տրամադրվել

նաև վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի այն անձանց, ովքեր խնդիրներ են ունեցել վերոնշյալ հարցի շրջանակներում: Դասախոսների և ուսանողների համար թիվ 3 մասնաշենքում ձևավորվել է 10 լսարան, որտեղից կատարվել է առցանց ուսուցում: Համալսարանի աշխատանքների առցանց կազմակերպման պարագայում անգամ հարկ եղած դեպքում առցանց դասավանդման մեջ դժվարացողների համար ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցներ աշխատանքային ժամանակացույցով առցանց ուսուցման գործիքների տեխնիկական և մեթոդական կիրառության հարցով ամենօրյա օգնություն են տրամադրել:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ Համալսարանում սովորում է 1727 ուսանող, որից 1140-

ը առկա, 587-ը հեռակա ուսուցման համակարգում:

Նկար 10. Ուսանողների թվաքանակը

Հեռակա ուսուցման համակարգը, ըստ դիտարկումների, այսօր առանձնապես գրավիչ չէ. դիմորդների հիմնական մասը նախընտրում է առկա ուսուցումը, չնայած ունենք դեպքեր, երբ առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված դիմորդը գերադասում է դիմել և սովորել հեռակա համակարգում. նման ուսանողների թիվը տարեկան տատանվում է 10-15-ի սահմաններում. վերջիններս մի քննությամբ համալսարան ընդունված անձինք են:

Ուսանողների թվի նվազման միտումը չփոխվեց նաև 2020 թվականին. նախորդ տարվա համեմատ այն կազմում է 9,4%(171 ուսանող):

Ըստ Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) մակարդակների հետևյալ իրավիճակն է. բակալավրիատում սովորում է 1589, մագիստրատուրայում՝ 138 ուսանող:



Նկար 11.Ուսանողների թվաքանակն ըստ կրթական աստիճանների

Մտահոգիչ է մագիստրատուրայի խնդիրը: Համակարգի ներդրման սկզբում (2008թ.) հետաքրքրությունն ավելի մեծ էր, սակայն նվազեց: Պատճառներից մեկը համակարգի անկատարությունն է, մյուսը ՝ ավելի էականը, շուկայում տիրող իրավիճակն է: Հիմնականում չկա տարակարգում մասնագետի, ավագ մասնագետի և այլ հաստիք զբաղեցնելու համար:



Նկար 12. Ֆակուլտետների ուսանողական համակազմը

Վերջին տասը տարիների ընթացքում բուհի ուսանողության թիվը բոլոր համակարգերում նվազել է, բացառություն չեն կազմել նաև 2020թ. ընդունելությունները (առկա և հեռակա ուսուցում): Պատճառն ու հիմնավորումը նույնն են՝ կրթության պահանջարկների խորքային փոփոխություն, չձևավորված աշխատաշուկա, ժողովրդագրական տեղաշարժ, սոցիալական և տնտեսական խորացած ճգնաժամ: Փոփոխվում են նաև մոտեցումները կրթական ծրագրերի նկատմամբ: Անշուշտ, կա նաև մրցակցային դաշտ. մեր բուհի համար ուժեղ մրցակից են երևանյան բուհերը: Պատճառն առաջին հերթին կրթության որակը չէ, հաճախ որոշիչ է դառնում մայրաքաղաքում աշխատանք գտնելու և դրանով վճարի հարցը կարգավորելու խնդիրը: Պիտի նշել, սակայն, որ 2016-2020թթ. ՎՊՀ դիմորդների թիվը ՀՀ դիմորդների հարաբերակցությամբ տոկոսային ցուցիչներով չի փոխվել:

Աղյուսակ 14. 2016-2020 թթ. ՎՊՀ դիմորդների թիվը՝ ՀՀ դիմորդների հարաբերակցությամբ

Ընդունելություն	***Տարեթիվ***				
	2016-17	***2017-18***	***2018-19***	***2019-20***	***2020-21***
կենտրոնացված ընդունելության ծավալը	10995	9073	5691	10421	11967
ՎՊՀ ընդունվածների թիվը	381	298	190	350	405
ՎՊՀ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում	3.5	3.3	3.3	3.35	2.88

Վերջինս վկայում է, որ, պայմանավորված հանրակրթության շրջանավարտների թվով և վերոնշյալ բաղադրիչներով, նվազել է նաև հանրապետության դիմորդների թիվը: Դիմորդների հավաքագրման գործընթացը տևական և բազմագործոն է: Այս առումով լուրջ աշխատանք է կատարվում բուհ-դպրոց կապի ապահովման նպատակով:Աշխատանքի մեջ ներգրավվում է պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 25 տոկոսը:

Բավականին կայուն է եղել ՀՀ դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը (3,3-3,6%), սակայն 2020թ.-ին այն կազմել է 2,88%: Պետք է նշել՝ ցուցանիշն ավելի վատը չէ, քան ՀՀ-ինը (11967 դիմորդից ընդունվել են 8706-ը (72,75%). մեր բուհի 489 դիմորդից ընդունվել են 405-ը (82,82%)):

Դիմորդների թվի մեծացման համար դերակատարում է ունեցել բուհ մեկ քննությամբ ընդունվելու հնարավորությունը. քննություններին չնախապատրաստվածների թիվը փոքր չէ, ուստի դիմորդների թվի և չընդունվածների թվի տոկոսային հարաբերակցությունն ավելի է մեծացել:

2020 թվականին նախորդ տարվա համեմատ պակասել է հեռակա ուսուցման համակարգի դիմորդների թիվը՝ 21-ով, սակայն ընդունվածների և դիմորդների թվի տոկոսային հարաբերությունը մեծացել է:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ՎՊՀ դիմորդների հիմնական մասը վանաձորցիներ են՝ 271 (55,4%): Լոռու տարբեր տարածաշրջաններից ունենք 186 դիմորդ (38%), մնացած դիմորդները այլ տարածաշրջաններից են և ներքին սփյուռքից:

Հաշվետու ժամանակահատվածում բուհ-դպրոց կապի ապահովման շրջանակում կատարվել են տեղեկատվական և կազմակերպչական աշխատանքներ, անցկացվել են ուսումնական, ճանաչողական, մշակութային միջոցառումներ մարզի դպրոցականների համար: Հաշվետու տարում իրականացվել են նաև ներբուհական ընդունելության քննությունների նկարահանումներ: Ընդունելության գործընթացում կիրառվել են առցանց հարթակների, Համալսարանի կայքի միջոցով տեղեկատվություն ապահովելու հնարավորությունները:

Հունվար, փետրվար ամիսներին անցակցվել են ֆիզիկայի բաց դասեր ք. Վանաձորի թիվ 8, թիվ 21 դպրոցների 9-րդ դասարանի աշակերտների համար:

2020թ. փետրվարին համալսարանում անցկացվել է «Ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հոգեբանական ասպեկտները» թեմայով սեմինար մարզի դպրոցների հոգեբանների և սոցիալական մանկավարժների համար: Սեմինարին մասնակցել են Լոռու մարզի դպրոցների հոգեբանները, սոցիալական մանկավարժները, ուսուցչի օգնականները, այդ թվում ք. Վանաձորի, Ստեփանավանի, Սպիտակի, Տաշիրի, Ալավերդու, Գյուլագարակի, Մեծ Այրումի, Կուրթանի, Ագարակի, Շահումյանի, Գուգարքի, Բազումի, Ազնվաձորի դպրոցների և ՎՊՀ մանկավարժության ամբիոնի թվով 38 մասնագետ:

Փետրվարին անցկացվել է Ավետիք Իսահակյանի ստեղծագործությանը նվիրված ասմունքի մրցույթ: Ասմունքի մրցույթները դարձել են բուհ-դպրոց կապի համագործակցության արդյունավետության դրսևորման մի ձև, որ հիմնական նպատակների հետ մեկտեղ հնարավորություն են ստեղծում աշակերտներին տեղեկատվություն հաղորդելու մեր համալսարանի մասնագիտությունների և ուսումնանյութական բազայի մասին և կողմնորոշելու դեպի ՎՊՀ: Մրցույթին մասնակցել են Լոռու մարզի 27 դպրոցների և

ՎՊՀ հենակետային վարժարանի 9-ից 12-րդ դասարանների թվով 60 աշակերտ: Մրցութային հանձնաժողովը որոշել է լավագույն ասմունքողներին: Թվով 7 աշակերտ արժանացել է I, II, III կարգի դիպլոմների, իսկ 8-ը՝ շնորհակալագրերի:

Համավարակի պատճառով աշխատանքային պլանով նախատեսված ռուսական պոեզիայի ասմունքի մրցույթը և դպրոցականների առարկայական օլիմպիադաները չեն անցկացվել:

Կատարվել է 2020-2021թթ. ընդունելության նախապատրաստական դասընթացների արդյունքների վերլուծություն: Դասընթացները հայտարարվել են ընդունելության քննությունների գրեթե բոլոր առարկաներից, սակայն խմբերը ձևավորվել են անգլերեն, հայոց լեզու, մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, կերպարվեստ առարկաներից: Դասընթացներին մասնակցել են ք.Վանաձորի և ք.Սպիտակի ավագ և միջնակարգ դպրոցների, ՎՊՀ հենակետային վարժարանի, ՎՊՀ քոլեջի, Գուգարք, Մարգահովիտ,

Լեռնապատ, Շահումյան, Լեռնանցք գյուղերի դպրոցների աշակերտները: ՎՊՀ –ի առկա ուսուցման համակարգ դիմել են նախապատրաստական դասընթացներին մասնակցած 22 աշակերտներ, որոնցից ընդունվել են 19-ը, այդ թվում մեկ մասնակից՝ անվճար: Այսինքն նախապատրաստական դասընթացներին մասնակցածների 86% դարձել են ՎՊՀ ուսանողներ, որը վկայում է նախապատրաստական դասընթացների արդյունավետության մասին: Այդ իսկ պատճառով կազմակերպվել են 2021-2022 ուստարվա ընդունելության նախապատրաստական անվճար դասընթացներ և ձևավորվել են խմբեր (հայոց լեզու գ) - 10 աշակերտ, անգլերեն (գ)՝ 8, հայոց պատմություն՝ 4, կենսաբանություն՝ 3, քիմիա՝ 4, մաթեմատիկա՝ 6:

Հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին անցկացվել է «Բաց դռների օր» միջոցառումը Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի աշակերտների և նրանց ծնողների համար: Հանդիպմանը ծնողների և աշակերտների հարցերին պատասխանել են Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներ:

2020թ. դեկտեմբերին հայտարարվել է Վ. Տերյանի ծննդյան 135-ամյակին նվիրված ասմունքի մրցույթ՝ Լոռու մարզի 9-12-րդ դասարանի աշակերտների համար: Համավարակի պայմաններում մրցույթն անցկացվելու է առցանց:

Ուսանողական համակազմ

Համալսարանի ուսանողության 74%-ը իգական սեռի ներկայացուցիչ է, արական սեռի ներկայացուցիչները համեմատաբար ավելի շատ են ընդգրկված հեռակա ուսուցման համակարգում: Հիմնական պատճառը զորացրվելուց հետո ուսուցման համակարգը փոխելն է: Պատճառները տարբեր են՝ աշխատանք, հոգեբանական անհամատեղելիություն, ուսման նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն:



	Բակալավրիատ	Մագիստրատուրա	ԸՆԴԱՄԵՆԸ
Առկա ուսուցում	1020	120	1140
Հեռակա ուսուցում	569	18	587

Նկար 13. Ուսանողական համակազմ

Ուսանողական համակազմի պատկերն այսպիսին է.

1. առկա ուսուցում-1140, որից
   - բակալավրիատ-1020
   - մագիստրատուրա-120
2. հեռակա ուսուցում-587, որից
   - բակալավրիատ-569
   - մագիստրատուրա-18

Վերոգրյալ ցուցանիշներն ուղղակիորեն կապվում են Հայաստանի Հանրապետության անվտանգության հետ. կրթական համակարգի մասնագիտությունների հիմնական մասում գերակշռող է իգական սեռը. վաղը դա անպայմանորեն ազդելու է տնտեսության զարգացման վրա: Բացի դրանից գիտական, հետազոտական աշխատանքների բնագավառից ևս դուրս են մնում արական սեռի ներկայացուցիչները:

Ասպիրանտական կրթությունը, երբ զրկվեց զորակոչից տարկետում տալու իրավունքից, ևս դարձավ աղջիկների համար մենաշնորհային:

Ընդունելության ցուցանիշը (ըստ տարածաշրջանների) գրեթե նույնական է համալսարանի համար: Վերջին տասնամյակում մեզ մոտ սովորում են հիմնականում Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի տարածաշրջանների երիտասարդները:

Ցուցանիշն ուղղակիորեն կապվում է ընդունելության ցուցանիշների հետ. դիմորդների մեջ մեծ է իգական սեռի ներկայացուցիչների թիվը, կան դեպքեր, երբ դիմորդ-ուսանող հարաբերությունն արական սեռի օգտին է, սակայն սրանից ընդհանուր վիճակը չի փոխվում:

Աղյուսակ 14. Ընդունելության ցուցանիշները

Կրթական աստիճան/ուսուցման համակարգ	արական	իգական
բակալավրիատ /առկա/	189	831
բակալավրիատ /հեռակա/	249	320
մագիստրատուրա /առկա/	7	113
մագիստրատուրա /հեռակա/	3	15
Ընդհանուր	448	1279

Ուսանողական շարժ

2020 թվականի ընթացքում ուսանողների թվի փոփոխության վրա անմիջական ազդեցություն է ունեցել նաև շարժը: Վերջինս պայմանավորվում է զինակոչի հետևանքով ուսանողների ուսումնառության դադարեցման (ազատում), զորացրումից հետո իրավունքների վերականգնման, ակադեմիական արձակուրդի ձևակերպման, ցածր առաջադիմության և պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով բուհից ազատման հետ: Լինում են նաև տարբեր պատճառներ (հիմնականում միգրացիա, սեփական դիմումի համաձայն ազատում): Ցավոք լինում են դեպքեր, երբ անգամ պետական կրթաթոշակով սովորողներ են ընդհատում ուսումն արտերկիր մեկնելու պատճառով:

Զորակոչի պատճառով ուսումն ընդհատած տղաների մի մասը սովորաբար գերադասում է իր ուսանողական իրավունքների վերականգնել հեռակա ուսուցման համակարգում: Ընդհանուր առմամբ 2020 թվականին շարժի պատկերն այսպիսին է.

Աղյուսակ 15. 2020 թ. ուսանողական շարժ /առկա ուսուցման համակարգ/

Առկա ուսուցման համակարգ			
Թվի նվազում		**Թվի աճ**	
Պատճառը	**Թվաքանակ**	**Պատճառը**	**Թվաքանակ**
զորակոչ	40	զորացրման հետևանքով վերականգնում	33

ակադեմիական արձակուրդ	4	ակադեմիական արձակուրդից վերադարձ	3
ակադեմիական առաջադիմություն	5	ուսումնական իրավունքի վերականգնում	12
պայմանագրային պարտավորություններ	9	տեղափոխություն	1
սեփական դիմումի համաձայն	18		
անհարգելի բացակայություն	1		
այլ բուհ տեղափոխություն	4		
շարժունություն	3		
Ընդամենը	84		49

Աղյուսակ 16. 2020 թ. ուսանողական շարժ /առկա ուսուցման համակարգ/

Հեռակա ուսուցման համակարգ			
Թվի նվազում		**Թվի աճ**	
Պատճառը	**Թվաքանակ**	**Պատճառը**	**Թվաքանակ**
զորակոչ	9	զորացրման հետևանքով վերականգնում	17
ակադեմիական արձակուրդ	3	ակադեմիական արձակուրդից վերադարձ	12
ակադեմիական առաջադիմություն	27	ուսումնական իրավունքի վերականգնում	39
պայմանագրային պարտավորություն	20	տեղափոխություն	5
սեփական դիմումի համաձայն	2		
անհարգելի բացակայություն	4		
այլ բուհ տեղափոխություն	1		
Ընդամենը	66		73

Առկա համակարգի 1-ին կուրսի ուսանողների մի փոքր մասը, օգտվելով Հայաստանի Հանրապետությունում գործող կարգից, տվյալ տարվա սեպտեմբեր ամսին ընդհատում է ուսումը և դիմում հեռակա ուսուցման համակարգ. 2020 թվականին ունեցել ենք 10 դեպք: Պայմանագրային պարտավորությունը չկատարելու (վճարը) պատճառով հեռացումը Համալսարանը հնարավորինս ձգում է՝ կիրառելով համաձայնագրով ըստ ամիսների մուծելու տարբերակը. կան դեպքեր, երբ այդ ճանապարհով էլ խնդիրը չի լուծվում. Կանգնում

ենք դեբիտորական պարտքեր կուտակելու վտանգի առաջ: Ուսանողների տեղափոխությունն ավելի շատ ներքին է՝ առկա համակարգից հեռակա: Սա ևս վտանգներ ունի: Հայաստանի Հանրապետությունում թեպետ գործում են հստակ կարգեր, սակայն առկա և հեռակա համակարգերի ուսումնական տարվա սկիզբների քառամսյա տարբերությունն առաջացնում է խնդիրներ (այդպիսին է իրավիճակը ըստ մեր ժամանակացույցերի):

Կրթական ծրագրեր

Համալսարանի առաքելության առաջնահերթությունն է տարածաշրջանի համար որակյալ, ստեղծագործ մտածողությամբ, անընդհատ կատարելագործվելու պատրաստ կադրերի պատրաստումը: Ճիշտ է, 2014թ-ից բուհը ստացավ համալսարանի կարգավիճակ, բայց իր 45-ամյա առաքելությանը ևս հավատարիմ մնաց. Համալսարանը արդեն 50 տարի ՀՀ հյուսիսային շրջանների համար մանկավարժական կադրեր պատրաստող առաջատար ուժն է:

2020թ ներդրված մասնագիտություններից 26-ը մանկավարժական են. այսօր մենք մասնագետներ ենք պատրաստում հանրակրթական 13 առարկաների դասավանդման համար, ինչպես նաև սոցիալական մանկավարժի, հոգեբանի և կրթության կառավարման մասնագետի պաշտոնները տեղակալելու:

Աղյուսակ 17.ՎՊՀ կրթական ծրագրերը (2020-21 ուստարի)

Դասիչ, Մասնագիտություն	Կրթական ծրագիր
Բակալավրի կրթական ծրագիր	
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն	
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	
011401.01.6	Կենսաբանություն
011401.05.6	Մաթեմատիկա
011401.09.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
011401.11.6	Կերպարվեստ
011401.13.6	Երաժշտական կրթություն
011401.18.6	Պատմություն
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն
022201.00.6 Պատմություն	
022201.01.6	Պատմություն
031301.00.6 Հոգեբանություն	
031301.01.6	Հոգեբանություն

032101.00.6 Լրագրություն	
032101.01.6	Լրագրություն
041301.00.6 Կառավարում	
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)
042101.00.6 Իրավագիտություն	
042101.01.6	Իրավագիտություն
053101.00.6 Քիմիա	
053101.02.6	Դեղագործական քիմիա
053102.00.6 Ռադիոֆիզիկա	
055102.01.6	Ռադիոֆիզիկա
056101.00.6 Մաթեմատիկա	
056201.00.6	Մաթեմատիկա
056802.00.6 Ֆինանսական մաթեմատիկա	
056802.01.6	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
101801.00.6 Սերվիս	
101801.01.6	Սերվիս
092301.00.6 Սոցիալական աշխատանք	
092301.01.6	Սոցիալական աշխատանք
Մագիստրոսի կրթական ծրագիր	
011101.00.7 Կրթական գիտություններ	
011102.05.7	Կրթական գիտություններ՝ Կրթության կառավարում
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
011401.05.7	Մաթեմատիկա
011401.18.7	Պատմություն
011401.06.7	Ինֆորմատիկա
011401.01.7	Կենսաբանություն
011401.02.7	Քիմիա
031301.00.7 Հոգեբանություն	
031301.07.7	Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն (հեռակա)
041301.00.7 Կառավարում	
041301.17.7	Կառավարում՝ Հանրային կառավարում

Լոռու տարածաշրջանի ուսուցիչների շուրջ 75%-ը մեր բուհի շրջանավարտներն են: Մասնագիտական մանկավարժության կրթական ծրագրերի (այսուհետ՝ ԿԾ) բարելավման հիմքում դնում ենք Որակավորումների ազգային շրջանակի 2-4-րդ մակարդակների

պահանջները: Նոյեմբեր ամսից սկսել ենք կրթական ծրագրերի բարելավման գործընթացը: Գոյություն ունի շատ կարևոր բաց Հայաստանի Հանրապետության մակարդակով. Կրթական ծրագրերի չափորոշիչները բացակայում են: 2020թ-ին ԿԳՄՍ նախարարությունից քննության է ուղարկվել միայն 011.301.00.6 մանկավարժական ուղղվածության չափորոշիչը, որի հաստատված տարբերակը դեռևս չկա: Տեղեկացված ենք, որ 011201.00.6 «Նախադպրոցական մանկավարժություն» ուղղվածության չափորոշիչն էլ է մշակվում (մեր բուհից հանձնաժողովում 3 անդամ է աշխատում), մոտեցումները պարզ են, և «Նախադպրոցական մանկավարժություն» կրթական ծրագրի վերակազման այս ժամանակահատվածում վերջնարդյունքները բխեցնում ենք այդ մոտեցումներից:

2020-21 ուսումնական տարվա ընթացքում բակալավրիատում ներդրված բոլոր կրթական ծրագրերը պիտի բարելավվեն: Հավատարմագրման գործընթացի ժամանակ հանձնաժողովը դրական էր գնահատել կրթական ծրագրերը, սակայն կային նաև դիտողություններ: Մասնավորապես.

«13.Կատարելագործել ՎՊՀ-ում դասավանդման ուսանողակենտրոն ուսուցումը. դասավանդման մեթոդները առավել համապատասխանեցնել վերջնարդյունքների ձեռքբերմանը, դասավանդումը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով համալրել տեղեկատվական տեխնոլոգիաներով,

14.Իրականացնել ՎՊՀ բոլոր ՄԿԾ-ների դասավանդման մեթոդների արդիականացում»:

Նշված խնդիրների լուծմանը անդրադարձել են Բարելավման Ծրագրում և նախատեսվել է դասավանդման մեթոդները առավել համապատասխանեցնել վերջնարդյունքների ձեռբերմանը, համալրել բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ների դասավանդման մեթոդները ՝ հաշվի առնելով առկա տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները տվյալ բնագավառում, կատարելագործել Համալսարանում դասավանդման ուսանողակենտրոն ուսուցումը, աստիճանաբար բարձրացնել մասնագիտական կրթական ծրագրերի ճկունությունը, գործող մասնագիտական կրթական ծրագրերում ավելացնել գործնական/սեմինար/լաբորատոր աշխատանքի դասաժամերն ու ավելացնել պրակտիկային տրվող ժամերը (Ծրագրի 3.2-3.4 կետեր):

Գործընթացի առաջին փուլն ավարտված է: Ճշտված են վերջնարդյունքները, ուսումնական պլանները կազմվում են մոդուլային հիմքով. վերջինս նորույթ է մեզ մոտ, նպատակը կոմպետենցիաների համախմբումն է, ինչը հնարավորություն կտա խուսափել անտեղի կրկնություններից:

2-րդ փուլի համար կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել և ամբիոններին է տրամադրվել հարցաթերթ, հարցումը և արդյունքների վերլուծությունը կդրվեն փոփոխությունների հիմքում:

Հաշվետու տարում կատարվել է շրջանավարտների որակի և պահանջվածության հարցում: Հարցումները կատարվել են 163 դպրոցում, 20 մանկապարտեզում, սպասարկման ոլորտում («Վիվասել-ՄՏՍ հայաստան» փակ բաժնետիրական ընկերություն, «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, ««Յուքոմ» հեռահաղորդակցության ընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն), հասարակական կազմակրպություններում («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Խաղաղության երկխոսություն», «Փոքրիկ իշխան», «Առավոտ»): Հետաքրքրություն են ներկայացնում հարցաթերթի 4-րդ, 5-րդ և 6-րդ հարցերի պատասխանները: Կազմակերպություններում վերջին հինգ տարիներին աշխատած ՎՊՀ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը 5-միավորանոց սանդղակով «5» է գնահատվել 21%-ը, «4»՝ 43%-ը, «1»՝ 7%-ը, «2»՝ 0%-ը: Տեսական գիտելիքների մակարդակը չի բավարարում հարցվողների 14.3%-ին, իսկ լիովին բավարարում է 21.4%-ին, 64.3%-ը ևս բավարարված է, սակայն ընդգծում է, որ գոյություն ունեն որոշակի բացթողումներ: Կրթական ծրագրերի բարելավման գործընթացում նշված կազմակերպության ներկայացուցիչները հաջորդիվ անպայամանորեն կընդգրկվեն աշխատանքային և ֆոկուս-խմբերում: Հարցումը վերհանել է ևս մի կարևոր խնդիր. Շրջանավարտների կարողությունները և հմտությունները լիովին բավարարում են հարցվողների 7%-ին, «չեն բավարարում» հարցին պատասխանել է 0%-ը, իսկ «բավարարում է, բայց գոյություն ունեն որոշակի բացթողումներ» հարցին՝ 80%-ը: Որոշակի համահնչունություն կա և՛ գիտելիքի, և՛ կարողությունների գնահատման և բավարարվածության մակարդակի խնդիրներում. հմտության և կարողության ձևավորումը այսօր առաջնահերթային է, և շատ գործատուներ աշխատանքի են ընդունում հատկապես գործնական կարողություններ ունեցողներին՝ անշուշտ կարևորելով մասնագիտական գիտելիքի մակարդակը: Բնական գիտությունների ֆակուլտետն այսօր ակտիվ համագործակցում է «Ինստիգեյթ» ուսումնական կենտրոնի («Նաիրի համընկերություն») հետ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի փոփոխության ուղղությամբ. 2020թ-ին նրանց առաջարկով օպերատիվ կերպով փոփոխության է ենթարկվել պրակտիկայի ծրագիրը:

Համեմատական վերլուծություն է կատարվել ՀՀ և միջազգային 22 համալսարանների կրթական ծրագրերի հետ. թիրախը եղել են վերջնարդյունքները: Ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են և պլանավորվում են հետագա բարելավման քայլերը:

Կրթական ծրագրերի բարելավման գործընթացին զուգընթաց որոշակի աշխատանքներ են սկսվել 011.301.04.7 «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ստեղծման ուղղությամբ: «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում տեղ է գտել 2016թ-ից (684-Ա/Ք 01.07.2016). պետական չափորոշիչ չկա, ուստի որոշ պարզաբանումների համար դիմել ենք ՀՀ ԿԳՄՍ-ին: Պատասխանի հիման վրա ստեղծվում է համապատասխան կրթական ծրագիրը: Նպատակը 60-90 կրեդիտ աշխատատարությամբ ծրագրով մանկավարժության մագիստրոս թողարկելն է. Համալսարանական, տեխնիկական բուհերի բակալավր շրջանավարտները հնարավորություն կունենան կրթություն ստանալ և աշխատել նաև որպես ուսուցիչներ:

Կրթական գործընթացում ներդրված 10 կրթական ծրագրեր համալսարանական են: Առկա և հեռակա ուսուցման համակարգերում մենք զուգահեռվում ենք մասնագիտական մանկավարժության և համալսարանական դասիչներով կրթական ծրագրերը:

Որոշակի խնդիրներ կան մագիստրոսական կրթական ծրագրերից մանկավարժական առարկայական երկամյա ուսուցման կազմակերպման առումով: 2020թ-ին քննարկվել է մեկ տարի տևողությամբ 60 կրեդիտ աշխատածավալով կրթական ծրագրերի ներդնումը, որոնց միջոցով կարող են համադրվել համալսարանական և մանկավարժական կրթական ծրագրերը: Հիմնարար առարկայական գիտելիք, անհրաժեշտ հմտություն ու կարողություն ձեռք բերած բակալավրից դժվար չի լինի մանկավարժ-առարկայագետ պատրաստելը: Քննարկվող կրթական ծրագրերի հիմնական բաղադրիչը լինելու են մանկավարժահոգեբանական դասընթացները և դասավանդման տեխնոլոգիաները:

Կրթական ծրագրեր գրավիչ են դառնում հատկապես դասավանդման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությամբ: Դասախոսությունը թեպետ իրեն չի սպառել, բայց հիմնովին փոխվել է մատուցման ձևը: Այսօր ուսանողակենտրոն ուսուցման կարևորագույն խնդիրը մտածող, վերլուծական զարգացած միտք ունեցող ուսանող ձևավորելն է, ուստի հիմնական թիրախ էր դարձել մեթոդաբանության խնդիրը: Սակայն Covid19 համավարակը 2020թ-ին այլ խնդիրներ առաջացրեց:

Կրթական ծրագրերի բարելավումը ինքնանպատակ չէ: 2020թ մարտից ստեղծված իրավիճակը քննություն էր ինչպես ԿԾ-ների կառուցիկության և իրապաշտական լինելու, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման մեթոդներում հեռաուսուցման տարրեր ներդնելու ճկունությամբ հասնել բուհի նյութական ռեսուրսների հագեցվացությունը ամբողջությամբ օգտագործելու առումով:

Համալսարանում դեռևս 2018թ-ից սկսված են եղել Moodle համակարգի ներդրման աշխատանքները. 10 դասախոսներ 2020թ վերապատրաստվել էին, նրանց և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի աշխատակիցների միջոցով անցկացվեցին

ուսուցանող աշխատանքներ ինչպես Moodle համակարգի, այնպես էլ Zoom գործիքի ներդրման ուղղությամբ: Համալսարանը ապրիլ ամսվանից անցավ Zoom գործիքով, ապա մայիս ամսին պրոֆեսորադասախոսական որոշակի խմբի կողմից Moodle-ով աշխատելուն:

Մայիս ամսին կատարված առցանց դասավանդման գործընթացի վերաբերյալ դասախոսների կարծիքի ուսումնասիրության ժամանակ վերհանվել են մի շարք խնդիրներ, այդ թվում՝

1. առցանց դասավանդման փորձի բացակայություն
2. առցանց դասավանդման նպատակով վերապատրաստված պրոֆեսորադասախոսական փոքրաթիվ կազմ,
3. դասապրոցեսում ուսանողի, հատկապես գործնական և լաբորատոր աշխատանքների լիարժեք կազմակերպման սահմանափակ հնարավորություն և կատարողների վերահսկման թույլ գործիքակազմ կամ գործիքակազմի բացակայություն,
4. հեռավար դասավանդման և ուսուցման մեթոդիկայի մշակման և ներդրման անհրաժեշտություն:

Կան տարբեր առաջարկություններ: Վերջիններից այս պահին իրականացվել է նյութատեխնիկական ռեսուրսների վերաբաշխումը՝ Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնի ռեսուրսների վերաբաշխմամբ ստեղծվել է երկու նոր համակարգչային լսարան: Վերանայվում են Moodle համակարգով դասավանդման (ուսանողի և դասավանդողի համար) ուղեցույցները, մշակվել է դրանց հակիրճ տարբերակը:

2020թ դեկտեմբերին հարցում է կատարվել ամբիոններին և սկսվել է վերապատրաստում Moodle համակարգով դասավանդելու համար:

Հեռավար ուսուցման գործիքակազմի տիրապետման, մեթոդների յուրացման համար աշխատանքները շարունակական են, մարտահրավերները ուժեղ են:

Առաջադիմություն

Ժամանակաշրջանը, շուկայական հարաբերությունները, մրցունակ լինելու խնդիրն այսօր առավել քան երբևէ դնում են որակյալ կրթություն ստացած, պահանջվող գիտելիք, անհրաժեշտ հմտություն ու կարողություն ձեռք բերած մասնագետի հարցը: Ցավոք, հաճախ առաջադիմությունն իր թվային ցուցիչներով իրական պատկերը չի բացահայտում:

2019-20 ուսումնական տարվա 2-րդ քննաշրջանի բակալավրի առկա ուսուցման արդյունքները կարող են լինել ասվածի վկայությունը. քննության թույլատրված 1010 ուսանողից քննաշրջանը հաջողությամբ փակել են 973-ը (շուրջ 96.3%), միայն *գերազանց* գնահատականով սովորում է 38,6%-ը, *գերազանց* և *լավ* գնահատականներով՝ 29%-ը, միայն *բավարար* գնահատականներով սովորում է 7,9%-ը : Քննաշրջանը կազմակերպվել է

առցանց: Դասախոսի և ուսանողի շփումը չի եղել անմիջական, դասախոսը հաճախ հնարավորություն չի ունեցել խորքային հարցում կատարելու, ուսանողը ճկունություն է ունեցել պատասխանի ընթացքում հարցերի պատասխանները տարբեր աղբյուրներից քաղելու:

Առկա ուսուցման անվճար և վճարովի համակարգերում սովորողների առաջադիմությունը գրեթե նույնն է (համապատասխանաբար 96,8% և 95,5%): Վճարովի համակարգի 799 ուսանողներից 242-ը քննաշրջանը փակել են միայն «գերազանց» գնահատականներով (30%), ինչը հնարավորություն է տվել անվճար համակարգ փոխադրվելու (57 ուսանող):

Փոխատեղումը կարևոր դրդապատճառ է բարձր գնահատականներով սովորելու համար. 1-IV (IV կուրսերի թիվը չի կարող ներառնվել) 158 ուսանողից 130-ը պահպանել են իրենց տարակարգը, փաստորեն փոխատեղվել է բակալավրիատի սովորողների 17.7%, մագիստրատուրայով ճիշտ նույն իրավիճակն է. փոխատեղումը ավելի մեծ տոկոս է կազմում ուսումնառության առաջին տարում (39.3%):

Աղյուսակ 18. 2020-2021 ուսումնական տարում անվճար ուսուցման իրավունքը պահպանած ուսանողների թվաքանակը

Կուրս	***Ուսանողների թվաքանակ***	***%***
II կուրս	31	60.784
III կուրս	42	87.5
IV կուրս	57	96.61
II կուրս (մագիստրատուրա)	15	83.333

Անվճար համակարգի նույնքան ուսանող էլ կորցրել է իր անվճար սովորողի կարգավիճակը: Այնուամենայնիվ, դրական և գիտելիքի որակի արժեքը կարևորող ցուցիչ է միայն *բավարար* գնահատականներով սովորողների թիվը (80):

Մագիստրոսական կրթություն ստանալու համար հիմնականում դիմում են բակալավրիատում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողները:

Ավանդաբար մագիստրատուրայի առաջադիմությունը եղել է ավելի բարձր. քննարկվող կիսամյակում միտումը պահպանվել է, թեպետ տարբերությունը փոքր է. 96%-ի դիմաց ունենք 98%, այստեղ միայն *գերազանց* գնահատականներով է սովորում շուրջ 57%-ը:

Հեռակա ուսուցման համակարգում վիճակը ևս վատ չէ. 68,9% Covid19 համավարակի պայմաններում լավ ցուցիչ է. հարգելի պատճառներով քննության չի ներկայացել 174 ուսանող (25,5%):

Այս համակարգում թեպետ ուսանողների թիվը նվազում է, սակայն ավելանում է միայն *գերազանց* (6,8%) և *գերազանց* ու *լավ* գնահատականներով սովորողների տոկոսային հարաբերակցությունը (20,7%)։ Սա խոսում է հեռակայող ուսանողի մոտիվացիայի (դրդապատճառ) փոփոխության մասին. առաջնային է դառնում ոչ թե բարձրագույն կրթության դիպլոմ ձեռք բերելը, այլ որպես որակյալ մասնագետ_ձևավորվելը։ Այս համակարգում միայն բավարար գնահատական ստացողների թիվը ևս նվազել է (21,6%)։



Նկար 14. Առաջադիմության ցուցանիշներ

Կրթական համակարգի համար առավել քան կարևոր են ամփոփիչ որակավորման արդյունքները։ Պետական մոտեցման փոփոխությունը (գերազանցության դիպլոմ կարելի է ստանալ 90 ՄՈԳ-ով) որոշակիորեն իջեցրել է այդ կարգի դիպլոմի արժեքը. բավարար ստացած ուսանողը ևս հնարավորություն է ստանում այդպիսի դիպլոմ ստանալու. բարձր կուրսերում կատարվող նուրբ հաշվարկները, կրեդիտ և ՄՈԳ հարաբերակցությունները երբեմն հնարավորություն են տալիս ուռճացման։ Այդ գործընթացը ամբողջությամբ վերահսկելը շատ բարդ է։

2019-20 ուսումնական տարվա առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների շուրջ 51%-ը ստացել է գերազանցության դիպլոմ։

Բավականին լուրջ ուսումնասիրության խնդիր կա առցանց ձևով կազմակերպվող ամփոփիչ ատեստավորման ժամանակ ավարտական աշխատանքների պաշտպանության համար։

Ամփոփված քննաշրջանում 298 ավարտական աշխատանքներից 219-ը (73,4%) գնահատվել *է գերազանց*, *բավարար* է գնահատվել 19 աշխատանք (6,3%)։

Քննարկվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի մեջ որոշակի փոփոխություններ կատարելու հարցերը. ձգտելու ենք թեման ընտրելուց մինչև նախապաշտպանություն փուլերը դարձնել առավել քան հաշվետվողական: Թերևս ժամանակն է նաև անդրադառնալ գրագողության խնդրին:

Հեռակա ուսուցման համակարգում ևս արդյունքները գրեթե նույնական են. 217 շրջանավարտից բուհն ավարտել են 207-ը, մյուս 10-ը եղել են զորակոչված: Նրանց համար ավարտական աշխատանքների պաշտպանությունը կկազմակերպվի հունվարի 25-ից:

Ավարտական աշխատանքի թեմաների հրամանագրումից առաջ ստուգվում է վերջին 3 տարում (նախկինում 5) թեման չկրկնելու հարցը. կրկնվող թեմաները չեն հրամանագրվում, առաջարկվում է վերանայել, սակայն սա ևս հարցի լուծում չէ:

Խնդիր է դրվել ընդլայնել ավարտական աշխատանքի հետազոտական մասը, սակայն պետք է նկատի ունենալ նաև, որ Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակի համար հետազոտությունը չի կարևորվում, սակայն առանց հետազոտության ավարտական աշխատանք կատարելը դառնում է անիմաստ:

2019-20 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ընթացիկ ստուգումներ չեն կատարվել, ուստի քննության առնել հանրագումարային քննության ներկայացածների թիվն անհնար էր: Հարցը ուսումնասիրվել է առաջին կիսամյակի արդյունքներով: Ունենք տվյալ պատկերը. բնական գիտությունների ֆակուլտետում քննության են ներկայացել 32 ուսանող, բարձրացվել է 18 գնահատական: Հասարակագիտական գիտությունների ֆակուլտետում բարձրացվել է 26 գնահատական, հումանիտարում՝ 23 գնահատական: Միայն մի դեպք ունենք, երբ կուրսի ուսանողների 87,5%-ը (8-ից 7-ը) ներկայացել է հանրագումարային քննության և բարձրացրել գնահատականը:

Կարող ենք փաստել, որ գնահատման բազմագործոնային համակարգը, ընթացիկ ստուգումներով ձևավորված գնահատականը լիովին բավարարում է ուսանողին. 7-8 շաբաթվա ընթացքում ուսումնասիրած նյութն ավելի հեշտ է համակարգվում և ներկայացվում ուսանողի կողմից: Այլ խնդիր է գնահատման չափելիության բարձրացումը: Դրան կհասցնենք անդրադառնալ 2021 թվականին:

2020 թվականի հոկտեմբերի 15-ից կրկին անցել ենք առցանց ուսուցման, քանի որ ունեինք գործընթացը հիբրիդային ձևով կազմակերպելու իրավունք: Որոշ մասնագիտությունների («Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտ») գործնական աշխատանքները կիսամյակի վերջին 6-7 շաբաթների ընթացքում կազմակերպվել են լսարանում և մարզադահլիճներում:

Պատերազմը ևս հանգեցրեց կազմակերպական նոր խնդիրների. զորակոչված որոշ դասախոսների ժամեր նպատակահարմար չէր փոխարինել: Ունեցանք նաև Covid19-ով

վարակված վիրուսակիր (ֆրանսերեն դասավանդող մյուս դասախոսի բեռնվածքը մեծ էր), որին հնարավոր չէր փոխարինել: Հարցը քննարկվեց ռեկտորատում, ուսումնական գործընթացը նշված (ևս մեկ այլ) դեպքերի պատճառով երկարաձգվեց մինչև պարտքերի մարման շրջանի վերջ:

«Ռադիոֆիզիկա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի 2 ուսանող էլ հոկտեմբերի 2-ից ռազմաճակատում էր, նրանց զորացրումը կատարվել է դեկտեմբերի վերջին և հունվարի սկզբին: Կիսամյակի որոշ դասընթացների համար կատարվել է ժամային խտացում: Ինչպես վերոնշյալ դեպքերի, այնպես էլ այս դեպքի համար կազմվել է նոր դասացուցակներ հունվար-փետրվար ամիսների համար:

Զորակոչի և համավարակի պայմաններում ոչ մի ուսանողի ուսումնական գործընթաց, քննաշրջան չի տուժել, թեպետ ունեցել ենք բավականին դժվարին ժամանակահատված. հոկտեմբերին միաժամանակ հիվանդացել են 14 դասախոս այն դեպքում, երբ կրթական գործընթացը կազմակերպվել է առցանց:

Ցավոք, ունեցանք նաև դասավանդողի մահվան դեպք Covid19 համավարակից: Առցանց դասավանդման հնարավորություններից օգտվելով՝ պայմանագիր կնքեցինք երևանյան մասնագետի հետ, իսկ ամբիոնին (օտար լեզուների և գրականության) հանձնարարվեց մինչև 2021-22 ուսումնական տարվա կիսամյակի սկիզբը նախապատրաստել մասնագետ:

Կարող ենք փաստել, որ առաջացած խնդիրները եղել են լուծելի և կառավարելի. դրանք եղել են ամենօրյա դիտարկման մեջ և անհրաժեշտության դեպքում կայացվել են հստակ որոշումներ, փոփոխություններ: Խնդիրն այնուամենայնիվ հեշտ չի եղել. բարդություն հարուցող հարցերի մի մասը եղել է համալսարանից դուրս, այդպիսին է եղել ինտերնետային կապի խնդիրը: Դասերը համալսարանից վարողների համար մեծացվել է ինտերնետային կապի հզորությունը (505ՄԲ-ից դարձել է 2005ՄԲ):

Ակադեմիական կուրսերում համաճարակի բռնկումներ չեն եղել, միայն երկու խումբ է, որ հոկտեմբերի 15-ից շուտ է անցել առցանցի: Պատճառը եղել է վարակակիր ուսանող հայտնաբերելը. կուրսում այլ ուսանող չի վարակվել:

Մշտապես համագործակցել ենք Լոռու տարածաշրջանի «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ «Լոռու մասնաճյուղ»-ի հետ:

Տարիներ շարունակ կարճաժամկետ կրթական ծրագրեր էին իրականացվում նաև շարունակական կրթության համատեքստում. տարբեր ժամանակահատվածում ներդրվել են շուրջ 12 դասընթացներ:

2020թ. փետրվար ամսին աշխատանքները սկսված էին. պատրաստ էին օտար լեզուներ (տարբեր մակարդակներ) ուսումնասիրել ցանկացողների խմբերը, սակայն առցանց կրթությունից հրաժարվեցին:

Համալսարանը 2020թ. ներկայացրել է հայտ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար դիմող անձանց վերապատրաստումն իրականացնելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված վերապատրաստող կազմակերպությունների ընտրության մրցույթին մասնակցելու համար: Մրցույթը շահելուց հետո կազմակերպվել է հանրակրթական դպրոցների տնօրենների վերապատրաստումը պատշաչ ձևով կազմակերպելով բոլոր ընթացակարգային հարցերը (հայտադիմումների ընդունում, ժամանակացույցի կազմում, մատյանների վարում, հարցաշարի վերանայում, մասնավորապես՝ փոփոխության են ենթարկվել այն բոլոր օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, որոնք այլևս իրավական ուժ չունեն, քննական թեստերի պատրաստում, նաև առցանց ձևաչափով): Ընդհանուր առմամբ առկա և հեռավար ուսուցման եղանակներով վերապատրաստվել և հավաստագրեր են ստացել Լոռու մարզի հանրակրթական դպրոցների 38 մանկավարժներ:

Վերապատրաստման ավարտին արդյունքների ամփոփման, իրականացրած աշխատանքների որակի գնահատման նպատակով իրականացվել է առցանց հարցում: Շնորհիվ բավականին բարձր են գնահատվել «Որքանո՞վ էր մատուցվող նյութի բովանդակությունը համապատասխանում ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից նախապես տրամադրված հարցաշարին», «Ինչպե՞ս կգնահատեք վերապատրաստման դասընթացների կազմակերպման որակը», «Անհրաժեշտության դեպքում վերապատրաստրաստման նպատակով նորից կդիմե՞ք ՎՊՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով» հարցադրումները:

Ասպիրանտուրա և հայցորդություն

Հաշվի առնելով Վանաձորի պետական համալսարանին տրամադրվող անվճար ասպիրանտական տեղերի սակավությունը, ինչպես նաև վերոնշյալ կարգով սահմանված ընդունելության նախապայմանների՝ «օտար լեզու» և «Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական գիտելիքներ» առարկաներից պարտադիր ատեստավորման վկայականների ձեռք բերման դժվարությունները, Համալսարանում հետբուհական կրթությունը հիմնականում իրականացվում է հայցորդության հիմունքներով:

2020թ. 5 հայցորդներ ավարտել են իրենց ուսումնառությունը, իսկ յոթ հայցորդներ և մեկ ասպիրանտ հեռակա ուսուցմամբ շարունակում են իրենց ուսումնառությունն ըստ հաստատված ուսումնական պլանի:Ուսումնական տարվա վերջում համապատասխան ամբիոններում անցկացվել է նրանց ատեստավորումը, որի արդյունքներով նրանք տեղափոխվել են հաջորդ կուրս: Տարբեր գիտական ամսագրերում տպագրվել են նրանց հոդվածները:

2020-21 ուստարում ընդունելության նպատակով հայտ են ներկայացրել երկու դիմորդ և ձևակերպվել են հայոց լեզվի և գրականության ամբիոնում որպես հայցորդներ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից այս տարի դեկտեմբերին հատկացվել է հեռակա ուսուցման համակարգի ասպիրանտական կրթության մեկ անվճար տեղ Ժ. 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ: Ընդունելության շնորհիվ ունենք ևս մեկ ասպիրանտ:

2020 թ. դրությամբ Վանաձորի պետական համալսարանը ունի 9 հայցորդ և երկու ասպիրանտ ձևակերպված «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Օտար լեզու և գրականություն», «Մանկավարժություն և հոգեբանություն» ամբիոններում.



Նկար15. Հայցորդների և ասպիրանտների քանակն ըստ ամբիոնների

2020թ. Վանաձորի պետական համալսարանին ուղարկվել է 2 ատենախոսություն որպես առաջատար կազմակերպություն (ԺԹ.00.01 և ԺԳ.00.02 դասիչներով), որոնք փոխանցվել են քննարկման համապատասխան ամբիոններին: Երկու աշխատանքներին էլ տրվել է դրական եզրակացություն և երաշխավորվել պաշտպանության:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտահետազոտական գործունեությունը բխում է բուհի առաջնահերթություններից և նպատակաուղղված է ինչպես գիտության զարգացմանը, այնպես էլ գիտական արդյունքների ներդրմամբ, հետազոտության և կրթության համադրմամբ ուսուցման որակի բարձրացմանը:

2020թ. սկզբից Covid19 համավարակով հետագայում պատերազմական վիճակով պայմանավորված՝ բուհի գիտահետազոտական գործունեությունը անցյալ տարվա տվյալների համեմատ համեմատաբար պասիվ է եղել: Այդուհանդերձ 2020թ. ընթացքում բուհի աշխատակիցների կողմից հրատարակվել է 93 գիտական աշխատանք(հոդված, թեզիս):

Ըստ հոդվածների քանակի ամենից շատ հոդվածներ ունի հայոց լեզվի և գրականության ամբիոնը (21 հոդված), բայց հաշվի առնելով այն հանգամանքը, թե ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի քանի տոկոսը ունի տպագրած հոդվածներ, առաջին տեղում է պատմության ամբիոնը (39%), երկրորդ տեղում՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը (38%), իսկ երրորդ տեղում՝ քիմիայի և կենսաբանության ամբիոնը (37%): Հայոց լեզվի և գրականության ամբիոնը չորրորդ տեղում է (35%):



Նկար 16. Գիտական հոդված ունեցող դասախոսների տոկոսային քանակությունը

Ինչպես տեսնում ենք տրամագիր 2.-ից Արվեստի և սպորտի, էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման և մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոսների 90%-ից ավելին չունեն տպագրված աշխատանքներ:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրված հոդվածների 26% համահեղինակությամբ են, որոնց մեջ կան տպագրված հոդվածներ ինչպես ՎՊՀ դասախոսների հետ համատեղ, այնպես էլ արտաքին գործընկերների հետ:

Վերլուծությամբ պարզվել է, որ տպագրված հոդվածների 53% տպագրված են ԲՈԿ–ի ցանկում ընդգրկված ամսագրերում և դրանց 49%՝ ՎՊՀ տեղեկագրում: Տպագրված

հոդվածների 31% տարբեր գիտաժողովների ժողովածուներում տպագրված հոդվածներ են, իսկ 16%՝ այլ ամսագրերում: «Պատմության» և «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնների հոդվածները հիմնականում տպագրված են մասնագիտական ամսագրերու, որոնք ընդգրկված են ԲՈԿ-ի ցանկում:



Նկար 17. Հոդվածների վերլուծությունը ըստ ամսագրերի

ՎՊՀ դասախոսները մասնակցել են շուրջ 27 միջազգային գիտաժողովների: Գիտաժողովների մասնակցություն են ցուցաբերել հիմնականում «Հայոց լեզվի և գրականության», «Մանկավարժության և հոգեբանության», «Օտար լեզվի և գրականության» և «Քիմիայի և կենսաբանության» ամբիոնների դասախոսները:

Շատ կարևոր է ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում: Դասախոսները ունեն ինչպես համատեղ աշխատանքներ ուսանողների հետ, այնպես էլ ղեկավարել են ուսանողների մասնակցությունը տարբեր գիտաժողովներին: Այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվել «Հայոց լեզվի և գրականության», «Պատմության», «Քիմիայի և կենսաբանության» և «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոնների դասախոսների կողմից:

2021թ. մարտի 5-ին պլանավորված է Ուսանողական գիտական ընկերության գիտաժողով:

Դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավման համար այս տարի սկսել ենք աշխատանքներ գիտական խմբերի ստեղծման ուղղությամբ, այդ նպատակով հանդիպումներ են տեղի ունեցել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ: Տրամադրվել է տեղեկատվություն գիտական խմբերի ստեղծման

ներկայացվող պահանջների վերաբերյալ և աջակցություն գիտական խմբերի ստեղծման հայտի ներկայացման հարցում: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնից ներկայացվել են չորս գիտական խմբերի հայտեր, որոնք այժմ գտնվում են փորձաքննության փուլում:

Գիտական խմբերի ստեղծումը հնարավորություն կտա ունենալ համատեղ թեմաներ, գիտահետազոտական նախագծերում ներգրավել ուսանողներին և երիտասարդ մասնագետներին: Դրա հետ մեկտեղ տարբեր դրամաշնորհներին դիմելու համար անհրաժեշտ է ունենալ տպագրված համատեղ հոդվածներ բարձր ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող ամսագրերում, որը կտա առավելություն գիտական ծրագրերի ֆինանսավորում ստանալու ժամանակ: Հետագայում նախատեսվում է աջակցություն գիտական խմբերին բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հոդվածների տպագրման համար:

Գիտաժողովներ

2020 թ. մայիսի 23-ին կազմակերպվեց հայ անվանի արձակագիր Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 85-ամյակին նվիրված գիտաժողով, որը թվով երրորդն է ՎՊՀ-ում հեղինակի ստեղծագործությանը նվիրված գիտաժողովների շարքում և ոչ միայն հարգանքի տուրք է գրողի ծննդյան տարեդարձին, այլև իր որոշակի նպաստն է բերում մաթևոսյանագիտությանը: Գիտաժողովի կազմկոմիտեին ուղղվել էր 35 հայտ, սակայն հետո գրականագիտության և լեզվաբանության բնագավառներում 25 աշխատանքով իրենց մասնակցությունը բերեց քանչորս անձ Հայաստանի, Արցախի Հանրապետությունից և արտերկրից (Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Ուկրաինա, ԱՄՆ):

Գիտաժողովի նյութերը ամփոփվել են համապատասխան ժողովածուի մեջ, ում ներառվել է նաև երրորդ բաժինը՝ վերնագրված «Հարակից նյութեր»:

ՎՊՀ գիտական տեղեկագիր

2020 թ. համալսարանի գիտական տեղեկագրի Ա պրակի (հումանիտար և հասարակագիտական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար ստացվել է Ա-1 Պրակի համար 24 հոդված, իսկ Ա-2 Պրակի համար՝ 18 հոդված: Բ Պրակի (բնական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար ստացվել է տասներկուական հոդվածներ Բ-1 և Բ-2 Պրակի համար: Ստացված բոլոր հոդվածները ուղարկվել գրախոսման և ստուգվել գրագողության փաստերը: Պրակ Ա-1-ում գրագողության փաստ չի արձանագրվել և բոլոր հոդվածները երաշխավորվել են տպագրության, իսկ Ա-2 Պրակում մեկ հոդված մերժվել է գրագողության պատճառով, մեկ հոդված հետ է վերցվել հեղինակի կողմից և 6 հոդված գրախոսների կողմից չեն երաշխավորվել տպագրության: Բ-1

Պրակում՝ 2 աշխատանք գրախոսի կողմից չի երաշխավորվել գրախոսման տպագրության չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով, իսկ մեկ հոդված մերժվել է գրագողության պատճառով: Բ- 2 Պրակում՝ 6 աշխատանք գրախոսի կողմից չի երաշխավորվել գրախոսման տպագրության չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով:

Հոդվածների ստացման աշխարհագրությունը տարբեր է: Հոդվածներ ստացվել են ինչպես ՎՊՀ աշխատակիցների կողմից, այնպես էլ տարբեր բուհերից և դպրոցներից:

Հրատարակվել են գիտական տեղեկագրի Ա և Բ պրակները, տպագրության է պատրաստվել գիտաժողովների 3 ժողովածու (Միջազգային գիտաժողով նվիրված Պողոս Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին, Հանրապետական ուսանողական 9-րդ գիտաժողով, Մաթնոսյանական արձագանքներ – 3 գիտաժողովների նյութերի): Նախապատրաստվել է «Մագիստրոս» հոդվածների ժողովածուն

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

4.1. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

2020 թ-ի հունվար ամսից Համալսարանը արտասահմանյան ու հայաստանյան բուհերի հետ ունեցած համագործացության շնորհիվ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի դիմում-հայտերի լրացման գործընթացում:

Ըստ այդմ՝ համալսարանը որպես գործընկեր բուհ 12 նախագծերին մասնակցելու համար դիմում-հայտ է լրացրել (11 Էրազմուս+ կարողությունների զարգացման և 1 Ժան Մոնե նախագիծ), որոնցից երեքի ֆինանսավորումը ընդունվել է եվրոխորհրդի կողմից: Այդ նախագծերի մեկնարկն ակնկալվում է 2021 թ-ին: Նախագծերի անվանումներ են.

1. Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում համալսարան-արդյունաբերություն կապի խթանում սմարթ ձեռնարկատիրական համագործակցության և ուսանողների մրացակցային մտավոր կարողությունների միջոցով: (CONNECT):*Համակարգող համալսարան՝ Մոլդովայի պետական համալսարան:*
2. Նորարարական մեթոդաբանության, մոտեցումների և անգլերենի միջոցով դասավանդման գործիքների խթանում՝ բարելավելու կրթական եկամտաբերությունը, կայունությունը և միջազգայնացումը (SMARTI):*Համակարգող համալսարան՝ Դրեզդենի տեխնիկական համալսարան*
3. Ժան Մոնե "Եվրոպագիտության խթանումը Հայաստանում" (PROMOEU) Համակարգող համալսարան՝ Մարիբորի համալսարանի էթնիկ, տարածաշրջանային և հասարակական գիտությունների եվրոպական կենտրոն, Սլովենիա

Ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստելու և հետագա ֆինանսավորում ստանալու նպատակով Համալսարանին հաջողվել է ֆինանսավորում ստանալ և շարժունություն իրականացնել հետևյալ համալսարանների հետ.

1. Գրանադայի համալսարան (Իսպանիա)
2. Տալլինի տեխնոլոգիական համալսարան (Էստոնիա)
3. Ալեքսանդրու Իոան Կուզայի անվան համալսարան (Ռումինիա)
4. Պորտուի համասլարան (Պորտուգալիա):

Համավարակով պայմանավորված շատ բարդացել է շարժունության կազմակերպման գործընթացը: Տարվա ընթացքում դրամաշնորհի արժանացած 5 ուսանողներից միայն մեկ ուսանողի է հաջողվել մեկնել Գրանադայի համալսարան: Մնացած 4 ուսանողներն ունեն խնդիրներ, որոնք կամ կապված են վիզայի ձեռքբերման խոչընդոտների հետ կամ հետաձգվել են անորոշ ժամանակով:

2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի համար ընտրվել են ևս երկու ուսանողներ, որոնք կուսումնառեն Տալլինի տեխնոլոգիական համալսարանում (Էստոնիա) և Յաշի համալսարանում (Ռումինիա):

2020թ-ի ընթացքում Գրանադայի (Իսպանիա), Պորտուի (Պորտուգալիա), և Պոզնանի (Լեհաստան) համալսարաններ դասավանդման նպատակով մեկնող երեք դասախոսների շարժունությունը, ինչպես նաև Յաշի համալսարան (Ռումինիա) մեկնող մեկ վարչական աշխատակցի վերապատրաստման դասընթացը հետաձգվել է մինչև 2021թ հուլիսի 31-ը:

2020-21 ուստարվա առաջին կիսամյակում կազմակերպված շարժունության մրցույթների արդյունքներով ՎՊՀ-ից ընտրվել են երկու աշխատակից Գրանադայի համալսարանում (Իսպանիա) հետազոտողների շաբաթին մասնակցելու նպատակով: Մեկ աշխատակից պատրաստվում է մեկնել Ռումինիա Ալեքսանդրու Իոհան Կուզայի անվ. Համալսարան՝ մասնակցելու միջազգայնացմանը նվիրված վերապատրաստմանը:

Հայաստանյան համալսարանների միջազգայնացման և մարքեթինգի խթանում/ ERASMUS+ BOOST նախագծի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

ա) Կոնսորցիումի անդամների հետ համատեղ մշակվել են ՀՀ բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարությունը և գործողությունների պլանը:

բ) Կազմակերպվել են քննարկումներ ՎՊՀ միջազգային կրեդիտային շարժունության ընթացակարգի մշակման ուղղությամբ: Փաստաթուղթը պատրաստ է և որոշ լրամշակումներից հետո կներկայացվի առաջիկա գիտխորհրդի հաստատմանը:

գ) Կազմակերպվել են հանդիպումներ ՎՊՀ մարքեթինգային ռազմավարական պլանի մշակման նպատակով: Բուհի վերակազմավորման և նոր ռազմավարության մշակման պատճառով ՎՊՀ մարքեթինգային ռազմավարական պլանի համար առաջարկված գաղափարները ընդգրկվել են ՎՊՀ ռազմավարական պլանի մեջ:

դ) BOOST նախագծի ՎՊՀ-ի աշխատակիցները ղեկավարել են Կրթական ծրագրերի ազգային մոդելի մշակման և օտարերկրյա որակավորումների ճանաչման և կրեդիտների փոխանցման մեթոդական ուղեցույցի մշակման գործընթացը: Նախագծին են ներկայացվել ուղեցույցի հայերեն և անգլերեն տարբերակները:

ե) Կոնսորցիումի անդամ ՀՀ գործընկեր բուհերի հետ համատեղ պատրաստվել է Study in Armenia կայքը https://studyinarmenia.am/en, որի համար իրականացվել է անգլերեն և հայերեն նյութերի պատրաստում, անգլերեն նյութերի խմբագրություն:

ERASMUS+ OOST նախագծի շրջանակներում բուհն ունեցել է հետևյալ ձեռքբերումները.

- ՎՊՀ 16 աշխատակիցներ վերապատրաստվել են բուհերի միջազգայնացմանը վերաբերող տարբեր բնագավառների ուղղությամբ (միջազգայնացման ռազմավարական պլանի մշակում, մարքեթինգային ռազմավարական պլանի մշակում, շարժունության կազմակերպում, միջազգային համագործակցության բաժինների գործառույթներ, հետազոտության միջազգայնացում):
- ՎՊՀ-ում հիմնադրվել է Էրազմուս+ կոնֆերանս դահլիճ, որը հագեցած է նոր սարքավորումներով և ծառայում է բուհում բազում առկա և առցանց միջոցառումների կազմակերպման համար:
- ՎՊՀ-ի աշխատակիցների շրջանում համեմատաբար փոխվել են միջազգայնացմանը վերաբերող մոտեցումները: Երիտասարդ աշխատակիցներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը և եթե երեք տարի առաջ օտար լեզվի ամբիոնի աշխատակիցներից բացի ոչ մի աշխատակից չէր կարող դասավանդել անգլերեն լեզվով, ապա նեկայումս բուհն ունի մոտ 5 աշխատակից, ովքեր պատրաստ են ներկայացնել իրենց մասնագիտական առարկաները անգլերեն լեզվով:
- Մշակվել են բաժնի գործընթացը կարգավորող ռազմավարական և ընթացակարգային փաստաթղթեր: Միջազգայնացման և մարթեքինգային պլաններին վերաբերող դրույթները ներառվել են ՎՊՀ 2020-25թ ռազմավարության մեջ, իսկ միջազգայնացման ընթացակարգը որոշ լրամշակումից հետո կներկայացվի գիտխորհրդի հաստատմանը:

2020թ-ի սկզբի «Ամերիկյան խորհուրդներ» կազմակերպության հետ սկսվել է համագործակցություն, որի նպատակն է խթանել ամերիկյան և հայկական, ինչպես նաև վրացական բուհերի միջև համագործակցությունը և առավել տեղեկացնել ամերիկյան բուհերի կառուցվածքի, միջազգայնացմանն ուղղված աշխատանքների և համագործակցության հնարավորությունների մասին: Այդ համագործակցության շրջանակներում Համալսարանի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել է Ամերիկյան խորհուրդներ»-ի կողմից կազմակերպված բոլոր առցանց միջոցառումներին, կազմակերպվել

է անհատական հանդիպում կազմակերպության աջակից Էդրիան Էրլինգերի հետ և քննարկել հնարավոր համագործակցության բնագավառները: Հաջորդիվ, համատեղ մոդուլի մշակման ուղղությամբ կազմակերպությունը նոր մրցույթ է հայտարարել COIL (համագործակցային առցանց միջազգային ուսուցում) ծրագրի շրջանակներում: Համալսարանի երկու դասախոս ներկայացրել են նոր դասընթացի առաջարկ, որն էլ ծրագրի կողմից արժանացել է հավանության (ՀՀ բուհերից հավանության արժանացած երեք բուհերի ցանկում է): Նման դասընթացի ներդրումը ՎՊՀ-ում հնարավորություն կընձեռի ունենալ ամերիկյան որևէ բուհի հետ համատեղ մշակված հեռավար դասընթաց, որը կիրականացվի ԱՄՆ գործընկեր բուհի ուսանողների և ՎՊՀ ուսանողների համար:

Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի ստեղծումից հետո առավել մեծ ուշադրություն է դարձվում բուհի գիտահետազոտական, ինչպես նաև ձեռնարկատիրական ուղղությունների խթանմանը: Այդ նպատակով ուսումնասիրվում են Հորիզոն 2020 ծրագրի, GIZ, Green Lane, Visegrad, COST, FAST, ANSEF ծրագրերի պահանջներն ու առաջարկները, մրցույթները:

Հայտ է ներկայացվել Green Lane ծազրին, ստեղծելու ՛՛Ձեռնարկատրության և նորարարությունների զարգացման կենտրոն (GREENDZOR HUB), որի հիմնական նպատակն է աջակցել երիտասարդների, կանանց և աղջիկների, խոցելի խմբերի, գյուղական բնակիչների, տեղահանված բնակիչների և սահմանափակ կարողություններով անձանց սոցիալական ձեռներեցության հմտությունների զարգացմանն ու ձևավորմանը: GREENDZOR HUB ծրագիրը իր ծավալած գործունեությամբ հիմքեր կստեղծի գյուղական գիտելիքի կանաչ նորարարական Startup նախագծերի էկոհամակարգերի ստեղծման համար:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը՝ PMI Science-ի աջակցությամբ հայտարարել է Ինկուբացիոն Ծրագիր, որին ներկայացվել է երեք հայտ, որոնցից երկուսը անցել են նախնական փուլը.

- «Մթնոլորտից ջրի ստացման սարքի ստեղծում կոնդենսացման միջոցով»
- «Ինքնակազմակերպվող շարժական ռոբոտային համակարգ («SOM-Robot»)» թեմաներով:

Հոկտեմբեր ամսին Լեհաստանի Գդանսկի համալսարանի դոկտոր պրոֆեսոր Ջուզեպպե Տ. Կիրելլայի կողմից ստացվել է համագործակցության առաջարկ մասնակցելու Հորիզոն 2020 ԵՄ ծրագրի կողմից COST Action նախագծին «Մարդ-բնություն հարաբերություններ. Բնապահպանական և տնտեսական կայունության ապահովում հետքովիդյան ժամանակաշրջանում՛՛: Առաջարկը ընդունվել է, բուհը ներկայացրել է հայտը, պատասխանը պարզ կլինի 2021թ. մարտ –ապրիլ ամիսներին:

Հուլիս-սեպտեմբեր ամիսներին կապ է հաստատվել ԱՄՆ Միսիսիպի նահանգի Վալեյ պետական համալսարանի /Valley State University/ հետ համագործակցելու

նպատակով, տեղի է ունեցել ZOOM հարթակով հանդիպում, և երկու բուհերի միջև նախապատրաստվել է համագործակցության հուշագիր որի ստորագրումը դեռևս ընթացքի մեջ է: Հուշագրի համաձայն նախատեսվում է համատեղ մասնակցություն համագործակցային նախագծերին, հետազոտողների, դասավանդողների փորձի փոխանակում, ուսանողների շարժունություն:

Նույն ժամանակաշրջանում Իրանի Մազանդարարանի, Սանկտ-Պետերբուրգի ՏՏՄՕ (Санкт-Петербургский университет Информационных технологий , механики и оптики ИТМО), Կաունասի տեխնոլոգիական համալսարանների հետ ձեռք են բերվել համագործակցության պայմանավորվածություններ, սակայն համավարակով և պատերազմով պայմանավորված այս գործըթացները ժամանակավորապես կանգ են առել:

4.2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԿԱՊԵՐ

Միջբուհական համագործակցության բնագավառում մեծ ձեռքբերումներ այս տարում չեն եղել, ինչը մեծապես պայմանավորված է եղել համավարակի և երկրում ստեղծված պատերազմական վիճակով: Այնուամենայնիվ, վերակնքվել է Շիրակի պետական համալսարանի հետ համագործակցության պայմանգիրը և ընթացքի մեջ է Բելառուսի պետական լեզվաբանական համալսարանի հետ համագործակցության պայմանագրի վերակնքման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն գործել են ՎՊՀ պաշտոնական ֆեյսբուքյան էջերը, որտեղ տեղադրվում և տարածվում են համալսարանի պաշտոնական կայքում (և ոչ միայն) տեղ գտած բոլոր տեղեկատվական նյութերն ու հայտարարությունները՝ հնարավորություն տալով նաև մեկնաբանել դրանք: Որպես անձնական էջ (профиль) ընկերների ցանկում ընդգրկված է մոտ 5.000 ֆեյսբուքյան օգտատեր: Ընկերների ցանկը պարբերաբար թարմացվում է. պասիվ օգտատերերին փոխարինում են նորերը:

Ֆեյսբուքյան երկրորդ էջը, որ ներկայացված է որպես կազմակերպություն, ունի 10.000 և ավելի ակտիվ հետևորդ, ինչը նպաստում է տեղեկատվության արդյունավետ տարածմանն ու հաշվետվողականության ապահովմանը: Գովազդի տեսանկյունից սա առավել մատչելի և արդյունավետ է՝ համեմատած քաղաքային, մարզային և հանրապետական ԶԼՄ-ների:

Յութուբյան ալիքով ուղիղ եթեր են հեռարձակվել համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստերը (4000+ դիտում):

2020 թվականի փետրվար ամսից գործում է ՎՊՀ պաշտոնական էջը նաև ինստագրամում:

Հաշվետու ժամանակահատվածում կայքում ներդրված արագ արձագանքման առցանց համակարգի միջոցով պատասխանվել է տարբեր բովանդակության 906 նամակի: Այս

համակարգը հնարավորություն է տալիս անմիջապես www.vsu.am կայքի համապատասխան էջից ուղղել հարցը: Հարց ու պատասխանը առավել արդյունավետ և արագ կազմակերպելու համար ներդրվել է բջջային հավելված, որը հնարավորություն է տալիս նամակներին պատասխանել նաև ոչ աշխատանքային ժամերին: Համալսարանի հետադարձ կապի բարելավման նպատակով ներդրվել է բջջային կապը անխափան կապ է ապահովել հատկապես համավարակի ամենաթեժ օրերին: Կայքի հրապարակումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էականորեն նվազել են՝ պայմանավորված համավարակով: Դիտողականությունը ևս նվազել է:

Հաշվետու ժամանակահատվածում ֆեյսբուքյան էջերով ապահովվել է նաև նամակագրություն շուրջ 6000 օգտատերերի հետ: Պատասխաններ են տրվել նրանց հետաքրքրող հարցերին, տրամադրվել անհրաժեշտ կարգերի և նյութերի հղումներ:

Համալսարանի անցակետում տեղադրվել են հեռուստացույցներ: Առկա և հեռակա համակարգերի, ինչպես նաև մագիստրատուրայի ընդունելության ժամանակ պատրաստվել են տեսանյութեր, տեղեկատվական նյութեր և ամենօրյա ռեժիմով (նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին) միացվել են անցակետի հեռուստաէկրաններին:

Ֆեյսբուքում տեղադրված վճարովի գովազդի առավելագույն դիտումների քանակը 65.334 է (բակալավրի ընդունելության հայտարարություն): Ֆեյսբուքը հնարավորություն է տալիս արձանագրել տարածվող հայտարարությունների ոչ միայն դիտումների թիվը, այլև ստանալ տեղեկություններ «այցելուների« բնակության վայրի (Հայաստանում և նրա սահմաններից դուրս), սեռի, տարիքի վերաբերյալ:

5. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել են մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ («Հայոց ցեղասպանությունը» և «Երկրաշարժ» թեմաներով՝ պատմության ամբիոնի դասախոսների հետ համատեղ), ներկայացումների («Հարսնացուն հյուսիսից», «Պատերազմ»),գեղարվեստական ֆիլմերի դիտումներ(«Կյանք ու կռիվ» 1-ին և 2-րդ եթերաշրջան),որոնք նպատակաուղղվել են ուսանողների գեղագիտական ճաշակի բարելավմանը:

Համալսարանում գործող Մշակույթի կենտրոնում ընդգրկված են մոտ 50 շնորհալի ուսանողներ համալսարանի տարբեր ֆակուլտետներից:

Կազմակերպվել են հայրենասիրական բնույթի բազում միջոցառումներ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության օրվան, Հայոց բանակի կազմավորման

տարեդարձին, նվիրված հայոց պատմության լուսավոր էջերին՝ մայիսյան հերոսամարտերին և այլն:

Հաշվետու տարում կազմակերպվել են բավականին սակավաթիվ միջոցառումներ.

- Փետրվարի 15-ին կայացավ «Սուրբ Սարգիս» զորավարի տոնին նվիրված միջոցառում: Մշակույթի կենտրոնը պատրաստել էր արդեն ավանդական դարձած անանուն նամակների արկղ,որտեղ սիրո խոստովանություններ էին գցվել:
- Մարտի 3-ին համալսարանի Բազում հանգրվանում կայացավ «Բարեկենդան» տոնակատարությունը: Միջոցառման երկրորդ մասում վառվեց արդեն ավանդական դարձած խրտվիլակը,որի մեջ թղթի վրա գրված երազանքներ կային:Այնուհետև տեղի ունեցավ հյուրասիրություն,պատրաստել էինք ավանդական տոնին համահունչ բլիթներ,գաթաներ և այլն:

Համավարակի պատճառով պլանավորված միջոցառումները չեղարկվեցին և նրանց փոխարինելու եկան հեռավար մրցույթները:

Հեռավար կրթության պայմաններում կազմակերպվել էր նաև «Հայաստանի ամենատաք անկյունը» մրցույթը: Տեսահոլովակի տեսքով ուսանողները ներկայացրել էին այն գողտրիկ անկյունը, այն գյուղը և նրա պատմությունը,որտեղ ապրում են իրենք: Հաղթող ճանաչվեց բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Երգենյանը:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրվա առիթով Մշակույթի կենտրոնը կազմակերպել է լուսանկարների հեռավար ֆլեշմոբ ուսանողների հերոս ազգականի լուսանկարը և տվյալները տարածելու նպատակով:

ՎՊՀ Մշակույթի կենտրոնը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 105-րդ տարելիցի առիթով կազմակերպել էր «Ցավը սրտումս» խորագրով ասմունքի և նկարչության հեռավար մրցույթ, որին կարող էին մասնակցել ՎՊՀ ուսանողները, վարժարանի և քոլեջի սաները: Բավականին հետաքրքիր աշխատանքներ էին ներկայացված.

ԱՍՄՈՒՆՔ

1. Նավոյան Ամալյա- Հովհաննես Թումանյան «Հոգեհանգիստ», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի
2. Մելքոնյան Անի - «Սիամանթո», «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի
3. Չատինյան Զարուհի-Պ. Սևակ «Անլռելի զանգակատուն», ՎՊՀ հենակետային վարժարան, 12-րդ դասարան,
4. Հակոբյան Սոնա,-հեղինակային, ՎՊՀ հենակետային վարժարան, 11-րդ դասարան,

5. Հախվերդյան Ամալյա-Ղազարյան Մարգարիտա «Կյանք միլիոն ու կես», «Սերվիս» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի
6. Խաչիկյան Մանե - Պարույր Սևակ «Անլռելի Զանգակատուն», ՎՊՀ վարժարան, 11-րդ դասարան,
7. Ղամբարյան Էմմա -Գևորգ Էմին <<Սիամանթոյի մենախոսությունը Դ հատված>>, «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի (ՀԱՂԹՈՂ)

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. Լազարևա Ալլա-«Իրավագիտություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի
2. Թորոսյան Աննա- «Կերպարվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
3. Տեր-Մելիքսեթյան Անի-«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի
4. Դալլաքյան Դին-«Կերպարվեստ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի (ՀԱՂԹՈՂ)

Դեկտեմբերի 21-ին կազմակերպվել է մոմավառություն՝ ի հիշատակ Համալսարանի ուսանողների, ովքեր զոհվել են 2020թ. Արցախյան պատերազմում

1. Դավիթ Արթուրի Հակոբյան
2. Արթուր Ռոբերտի Վերանյան
3. Միեր Մերուժանի Հարությունյան
4. Վահե Սահակի Աղամալյան
5. Դավիթ Արամի Մոսոյան

Համալսարանում ստեղծվել է մեր հերոս ուսանողների հիշատակի անկյուն:

2020 հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՎՊՀ «Բազում» ուսումնամարզական հանգրվանում հյուրընկալվել են Արցախից տեղահանված շուրջ 70 քաղաքացիներ: Վանաձորի պետական համալսարանը վերջիններիս ապահովել է կեցության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մասնագետները ցուցաբերել են հոգեբանական աջակցություն: Երեխաները համալսարանի աշխատակիցներ ջանքերով ապահովվել են գրենական պիտույքներով և խաղալիքներով: Ուսանող քաղաքացիներին հնարավորություն է տրվել ազատ ունկնդրի կարգավիճակով մասնակցել ՎՊՀ համապատասխան մասնագիտության առցանց դասերին: Դպրոցականները հաճախել են Բազումի միջնակարգ դպրոց: Առցանց դասերը ապահովելու

համար տեղադրվել են WiFi սարքավորումներ:

Բացի կազմակերպական աշխատանքներից՝ Համալարանը Արցախյան պատերազմին ցուցաբերել է ֆինանսական աջակցություն:«Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք մեր սահմանները» դրամահավաք-արշավին համալսարանի ֆոնդից փոխանցվել է 1 մլն դրամ ՀՀ դրամ, Համալսարանի աշխատակիցները հանգանակել և փոխանցել են 1 մլն 75 հազար ՀՀ դրամ, հենակետային վարժարանի աշխատակիցներ՝ 470 հազար ՀՀ դրամ, քոլեջի աշխատակիցները՝ 33 հազար ՀՀ դրամ:Նվիրաբերվել է ՎՊՀ սեփականություն հանդիսացող ՊԱԶ 3234 մակնիշի ավտոբուսը և 690 լիտր դիզվառելիքի կտրոն: Աշխատակիցների հանգանակած գումարներով գնվել և Առողջապահության նախարարությանն է փոխանցվել շուրջ 340 հազար ՀՀ դրամի դեղորայք:

6. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

6.1. ԿՐԹԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Համավարակը նոր մարտահրավերներ առաջադրեց կրթական համակարգին և Համալսարանի առջև խնդիր առաջացավ հնարավորինս սեղմ ժամկետներում անցում կատարել դեպի հեռավար կրթություն: Բուհն արդեն ուներ գործարկված հեռավար կրթության հարթակ ոչ ֆորմալ կրթություն կազմակերպելու համար: Իսկ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի դասընթացների հեռավա դասավանդումը սկսած մարտ ամսվա երկրորդ կեսից կազմակերպվեցին հետևյալ համակարգերի միջոցով.

- Moodle հարթակ-բավականին ճկուն համակարգ է, և հնարավորություն է տալիս կիրառելու դասավանդման և ուսումնառության բոլոր գործիքները՝ առցանց դասախոսություն, գիտելիքների ստուգում, ինքնուրույն աշխատանքի ներկայացում, հաճախումների գրանցում, հետադարձ կապի ապահովում և այլն: Moodle համակարգի կիրառության համար դասախոսական կազմի մի մասը (հատկապես ավագ սերնդի ներակայացուցիչները) դժվարություններ ուներ: Փորձեցինք համակարգի կիրառության հմտությունների ձևարվորման համար փոքր խմբերով «փորձառուների» փորձի փոխանակման դասընթացներ կազմակերպել, սակայն արդյուավետությունը նրանց համար շատ բարձր չէր: Այդ պատճառով կիրառվեց այլընտանքային Zoom հարթակը, որը ներառվեց նաև Moodle համակարգում որպես գործիքակազմի համալրում:
- Zoom հարթակը ավելի լայն կիրառություն ունեցավ, և բացի դասավանդումից, այս հարթակի հնարավորություններն օգտագործվել է գիտելիքների ստուգման համակարգում. ընթացիկ քննություններ, հանրագումարային քննություններ, ամփոփիչ ատեստավորում: Գիտելիքների առցանց ստուգման հաջորդական քայլերի

նկարագրությունը (ալգորիթմ) քննարկվել և հաստատվել է ռեկտորատի նիստում և հասանելի է եղել բոլոր շահառուներին՝ դասախոս, ուսանող, ուսխորհուրդ և այլն:

- Google Attendance գործիքը կիրառվել է էլեկտրոնային մատյանների վարման նպատակով: Այն տեղադրված է եղել Google Drive միասնական հարթակում: Էլեկտրոնային դասամատյանը վարել է դասընթացը դասավանդող դասախոսը, հասանելի է եղել տվյալ կուրսի ուսանողներին, ամբիոնի վարիչին, դեկանին որպես «դիտողներ»(viewer):
- Trello հարթակը կիրառվում է կառավարման նպատակով, մասնավորապես օգտագործվում է որպես ռեկտորատի նիստերի օրակարգի սահմանման և տարածման, որոշումների և հանձնարարականների, պլանավորման և հրատապ տեղեկատվությունների տարածման գործիք:

Նշված հարթակների կիրառությամբ պայմանավորված մեծացվել է ինտերնետ կապի հզորությունը, որի մասին արդեն նշվել է վերևում:

6.2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ

Համալսարանը բավականին հագեցած է տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից սարքավորումներով. յուրաքանչյուր տարի տարբեր ճանապարհներով (Համալսարանի բյուջե, Տեմպուս, Էրազմուս+ և այլ ծրագրեր) ձեռք են բերվել նորերը:

Համակարգչային լսարանների, լաբորատորիաների վերախմբավորմամբ 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ կրթական գործընթացը սպասարկում են 13 համակարգչային լսարան և լաբորատորիա՝ 176 համակարգչով. գործնական ժամերի ընթացքում յուրաքանչյուր ուսանող օգտվում է առանձին համակարգչից: Բացի այդ, 162 համակարգիչ ևս ներգրավված են և արտաուսումնական գործընթացների մեջ:

2020թ դեկտեմբերին ձևավորվել է 8 լսարան, որը կծառայի հատկապես «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի դասընթացներին;

Համակարգչային լսարանները հիմնականում վերազինվել և վերաբաշխվել են ըստ ֆակուլտետների (յուրաքանչյուր ֆակուլտետ ապահովված է ուսումնական գործընթացը նմանատիպ լսարաններում կազմակերպելու համար), իսկ թիվ 3,4,5 լսարանները համահամալսարանական են: Վերջին երկուսը լիովին ձևավորվել են 2020 թվականին՝ կիրառելով որոշ սարքավորումներ ձեռքբերված ERASMUS+ PRINTeL նախագծի շրջանակներում, և ունեն տարբեր գործառութային կարողություններ (դասի տեսաձայնագրում, հեռարձակում և այլն):

2020թ ընթացքում, ըստ Համալսարանի կարիքների, բարձրացրել է ինտերնետ-կապի արագությունը, ստեղծվել է 6 գործող Zoom լսարան (ևս 10 շարժական նման լսարանի հնարավորություն կա): Իրականացվել է ցանցի բարելավում, միկրոտիկի տեղակայում,

ցանցի վերաբաշխում, համալսարանի ունեցած հնարավորություններով գրադարանի ընթերցասրահում ձևավորվել է համահամալսարանական համակարգչային սրահ՝ միացված համացանցին, ամբողջ համալսարանում կառուցվածքային փոփոխություններից կախված՝ կատարվել է փոփոխություն համակարգիչների բաշխման համակարգում, տեղափոխվել է առնվազն 50 համակարգիչ, ձևավորվել առնվազն 10 ցանցային հանգույց, ֆակուլտետներում ըստ առաջնահերթության տեղադրվել են wifi երթուղիչներ՝ ապահովելով համացանցի հասանելիությունը անլար տարբերակով, համակարգչային սարքավորումների մոնիտորինգի շնորհիվ պարզվել է 30 անխափան սնուցման սարքի աշխատանքային վիճակում գտնվելու կարգավիճակը, որոնք կարող են մարտկոց փոխարինելու դեպքում դեռևս ծառայել, նույն քանակությամբ ups-ների մարտկոցներ փոխարինվել են և բերվել աշխատանքային վիճակի, կատարվել է տպիչ սարքերի մոնիտորինգ, որից հետո սկաներով տպիչները վերաբաշխվել են՝ ըստ նպատակային ծառայության, նույն քանակությամբ ups-ների մարտկոցներ փոխարինվել են և բերվել աշխատանքային վիճակի, կատարվել է տպիչ սարքերի մոնիտորինգ, որից հետո սկաներով տպիչները վերաբաշխվել են՝ ըստ նպատակային ծառայության, առնվազն 100 համակարգչի վրա փոխարինվել է օպերացիոն համակարգը և տրվել ծրագրային բոլոր կարգավորումները, իրականացվել է լաբորատորիաներում պահանջվող նեղ մասնագիտական ծրագրերի տեղակայում (Matlab, Visual Studio, Netop School, Xamp):

6.3. ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԳՐԱՊԱՇԱՐ

2020 թ. դեկտեմբերի դրությամբ գրադարանի գրապաշարը կազմում է 138.042 միավոր: Գրապաշարում առկա գրականությունն ըստ լեզուների բաշխվում է հետևյալ կերպ. հայալեզուն՝ 57.460 միավոր, օտարալեզուն՝ 78.110 միավոր, որից 73.181-ը՝ ռուսալեզու: Գրապաշարի շուրջ 2500-ը հնատիպ և հազվագյուտ գրքերն են:



Նկար 18. Հայալեզու, ռուսալեզու և այլալեզու գրապաշարների տոկոսային հարաբերությունը

Հաշվետու տարում անհատ քաղաքացիներից, առանձին հեղինակներից և կազմակերպություններից ստացված նվիրատվությունների միջոցով ստացվել է 602 միավոր գիրք:

2020 թ. 2-րդ կիսամյակում շուկայի առաջարկի հիման վրա բուհի մասնագիտական ամբիոնների հետ համատեղ գրադարանը կազմել և գնումների բաժին է ներկայացրել առարկայական գնման գրացուցակները:

Համապատասխան ընթացակարգով իրականացված գնման շնորհիվ ձեռք է բերվել 84 միավոր (50 անուն) մասնագիտական (լեզվաբանություն, գրականագիտություն, պատմություն, տնտեսագիտություն, արվեստ, ծրագրային գեղարվեստական) գրականություն՝ 312.320 դրամ ընդհանուր արժողությամբ:

Ներբուհական կառուցվածքային փոփոխությունների հետևանքով լուծարվել են առարկայական կաբինետները, որոնց ենթակայության տակ եղած ավելի քան 3000 միավոր գրականությունը վերադարձվել է գրադարան: Գրապահոցների գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով գրադարանը բուհի ղեկավարության հանձնարարությամբ մշակել է առարկայական հավաքածուների որակական կամ բովանդակային վերլուծություն իրականացնելու մեթոդաբանություն:

2020 թ. առաջին կիսամյակում բաժանորդագրվել ենք 17 անուն օրաթերթ և ամսագիր, իսկ երկրորդ կիսամյակում՝ 3 անուն թերթ:

Համավարակի հետևանքով հեռավար ուսուցման անցումն իր ազդեցությունը թողեց գրադարանի սպասարկման համակարգի վրա: Մասնավորապես, նվազել են գրքատացքի և հաճախումների ցուցանիշները: Առավել արդյունավետ սկսեց աշխատել գրքերի

էլեկտրոնային պատվերի համակարգը: Այս նպատակով կատարելագործվել է էլեկտրոնային քարտադարանի և գրքի հեռահար պատվերի ծրագիրը: Սրանով պայմանավորված՝ սեպտեմբեր ամսից գրադարանն ընթերցողներին սպասարկել է բացառապես էլեկտրոնային պատվերի հիման վրա: ՎՊՀ տեղայնացված էլեկտրոնային գրադարանի ծրագիրը տեղադրվել է ՎՊՀ կայքէջում՝ հասանելիությունը հնարավորինս դյուրին դարձնելու նպատակով: Դեկտեմբեր ամսվա տվյալներով ՎՊՀ Էլեկտրոնային գրադարանի ծրագրում գրանցված են ավելի քան 1000 օգտվողներ:

Ուսանողներին գրադարանից օգտվելու կարգին ծանոթացնելու, աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով 2020-2021 ուս.տարվա սկզբին ստեղծվել է ուղեցույց-տեսահոլովակ:

Առավել պահանջված և ուսումնական գործընթացին անհրաժեշտ գրականության պակասը գրադարանը փորձել է մասամբ բավարարել գրքերի պատճենահանման ճանապարհով. այս տարի կազմվել է 89 ամբողջական գիրք, մասնակի վերանորոգվել 11-ը:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը տեղեկատվական ռեսուրսներով ապահովելու նպատակով Համալսարանը բաժանորդագրվել է «Իրտեկ» իրավաբանական-տեղեկատվական համակարգին: Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային գրադարանային բազաներին բաժանորդագրվելու, համացանցում հասանելի էլեկտրոնային գրադարանային համակարգերի հետ համագործակցության ուղղությամբ:

Գրադարանային ծառայությունների արդիականացման շրջանակներում ընթերցասրահը համալրվել է ինտերնետ հասանելիություն ապահովող համակարգիչներով:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թ.-ի հունվար ամսվա ընթացքում ՌԱԿ-ի կողմից իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի ներուժի զարգացման վրա ազդող գործոնների ուսումնասիրություն: Ըստ ստացված արդյունքների՝ դասավանդման և ուսումնամեթոդական գործունեության տեսանկյունից որպես ազդեցության գործոն առանձնացվել են ժամանակակից տեխնիկայով դասավանդելու հմտությունները, ուսումնամեթոդական հրապարակումների հնարավորությունը, գիտամեթոդական սեմինարների անցկացումը, ոլորտային մասնագետներ հրավիրելու հնարավորությունը, ժամանակակից գրականության հասանելիությունը և այլն: Գիտահետազոտական և ստեղծագործական գործունեության տեսանկյունից շեշտվել են գիտահետազոտական, ստեղծագործական խմբերի ձևավորումը, փորձնական լաբորատորիաների հիմնումը, ֆինանսական աջակցության հնարավորությունները, դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը, գիտաժողովների կազմակերպումը և այլն: Վարչական և հասարակական գործունեության տեսանկյունից

հիմնականում դիտարկվել են բարոյահոգեբանական մթնոլորտը, թղթաշրջանառության հագեցվածությունը, աշխատանքային պայմանագրերի ժամկետները:

Հունիս-հուլիս ամիսների ընթացքում կատարվել է առցանց ուսուցման արդյունավետության գնահատում: Վերհանվել են խնդիրները, հնարավոր առավելությունները: Խնդրահարույց են համարվել առցանց դասավանդման փորձի բացակայությունը, առցանց դասավանդման նպատակով վերապատրաստված պրոֆեսորադասախոսական փոքրաթիվ կազմ ունենալը, գործնական և լաբորատոր աշխատանքների լիարժեք կազմակերպման սահմանափակ հնարավորությունը, կատարողականի վերահսկման թույլ գործիքակազմը, ակադեմիական ազնվության սկզբունքների հիման վրա հեռավար կրթության պարագայում օբյեկտիվ և արդյունավետ գնահատում իրականացնելու անհնարինությունը, արտակարգ դրությամբ պայմանավորված աշխատանքի ծանրաբեռնվածության ավելացումը: Որպես հնարավորություն առանձնացվել է հեռավար դասավանդման մեթոդներին, գործիքակազմին տիրապետելու փորձի ձեռքբերումը, արտակարգ դրության պայմաններում աշխատանքը չկորցնելու հնարավորությունը: Մեծամասնությունը շեշտել է բուհի կողմից առցանց ուսուցման կազմակերպման օպերատիվությունը:

Մասնագիտությունների պահանջարկը գնահատելու նպատակով սեպտեմբեր ամսից ամենամսյա պարբերականությամբ իրականացվում է 10 առավել հեղինակավոր աշխատանքային կայքերի մշտադիտարկում: Արդյունքներն ամփոփվելու են 2021 մայիս-հունիսին՝ գործատուների և ավագ դպրոցի աշակերտների շրջանում նախատեսված հարցումներից ստացված տվյալների զուգորդմամբ:

Հաստատված աշխատանքային պլանի համաձայն մշակվել և փորձարկվել են ուսանողների ակնկալիքների ուսումնասիրման հարցաթերթերը: Բակալավրի առաջին, երկրորդ-երրորդ, չորրորդ և մագիստրատուրայի ուսանողների համար համապատասխանաբար նախատեսվել են առանձին հարցաթերթեր՝ հաշվի առնելով սպասելիքների հնարավոր տարբերությունները: Թագավարակով պայմանավորված՝ հարցումներն անցկացվել են առցանց: Հարցման արդյունքներն ամփոփման փուլում են: Առաջին կուրսեցիների շրջանում ակնկալիքները հիմնականում նոր ծանոթությունների, հարաբերությունների հնարավորության, նոր կարգավիճակ կրողի շեշտադրմամբ են առանձնացել: Երկրորդ և երրորդ կուրսեցիների սպասելիքները հիմնականում ուղղված են դասախոսների հետ լսարանային համագործակցության հնարավորություններին, մասնագիտական գրականության հասանելիությանը, բազմակարծության խրախուսմանը: Չորրորդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողների ակնկալիքները հիմնականում վերաբերում են մասնագետի կայացման հնարավորություններին, աշխատաշուկայի

պահանջարկին, արտալսարանային մասնագիտական քննարկումների հնարավորություններին, մասնագիտական պրակտիկ փորձի ձեռքբերմանը:

Մշակվում են դասախոսների և գործատուների սպասելիքների ուսումնասիրման հարցաթերթեր, որոնք այժմ փորձարկման փուլում են:

Հընթացս իրականացվում է 3 ՄԿԾ-ների աուդիտ («Սերվիս», «Մանկավարժություն և մեթոդիկա», «Սոցիալական աշխատանք»): «Սերվիս», «Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ների փաստաթղթային ուսումնասիրության շնորհիվ առանձնացվել են առավել շատ և առավել քիչ կոմպետենցիաներ ձևավորող դասընթացները, դիտարկվել է միևնույն կոմպետենցիաները ձևավորող դասընթացների աշխատածավալը: «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի աուդիտը նոր է նախաձեռնվել, փաստաթղթերի ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ է: Մշակվել են ուսանողների և շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթերը: Հարցումներն անցկացման փուլում են:

Հաշվետու ժամանակահատվածում նաև իրականացվել է ուսանողների շրջանում հոգեբանական և իրավաբանական խորհրդատվության կարիքի գնահատում (Արդյունքներն ամփոփված են): Հոգեբանական խորհրդատվության պարագայում ուսանողների կարծիքները համաչափ տարբերվում են. Ուսանողների գրեթե կեսը պատրաստակամություն է հայտնել օգտվել բուհում հոգեբանական խորհրդատվության հնարավորությունից, գրեթե մյուս կեսը մերժել է նման հնարավորությունը: Իրավաբանական խորհրդատվության կարիքի գնահատման առումով նշենք, որ ուսանողներն իրենց իրավունքների հետ կապված մասնագիտական իրավաբանական խորհրդատվության կարիք չեն զգացել: Առհասարակ խնդիրների առաջացման պարագայում բուհում իրավաբանական խորհրդատվության հնարավորության դեպքում հարցվողների մեծամասնությունը պատրաստակամություն է հայտնել դիմել աջակցության:

Վերանայվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքները: Մշակվել է ամբիոնների մակարդակով վերջնարդյունքների վերանայման գործողությունների շարքը: Բակալավրի կրթական ծրագրերի վերջնարդյունքները քանական, ձևակերպման և բովանդակային տեսանկյունից ուսումնասիրման փուլում են:

8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1.ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎՊՀ հենակետային վարժարան 2020-2021 ուսումնական տարում ընդունվել են 151 աշակերտ: Ներկայումս վարժարանն ունի 448 աշակերտ: Զգալի աշխատանքներ են տարվել վարժարանում ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ: Բացառությամբ մինչև մեկ

տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների, բոլորն անցել են ատեստացիա, 12 ուսուցիչ՝ երկրորդ անգամ: Ներկայումս վարժարանի յոթ ուսուցիչներ ունեն ուսուցչի որակավորման առաջին տարակարգ: Տարակարգ ստանալու գործընթացը կրում է շարունակական բնույթ, ատեստացիա անցած մի շարք ուսուցիչներ պատրաստվում են ներկայացնել ուսուցչի որակավորման առաջին տարակարգի համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Այս ուսումնական տարում հենակետային վարժարանում աշխատում են գիտության 6 թեկնածուներ:

Ուսուցման որակի բարձրացման նպատակով շարունակվում է համագործակցությունը համալսարանի ամբիոնների հետ:

Այս ուսումնական տարում վարժարանը տեղափոխվել է ուսումնական նոր մասնաշենք: Լսարանային ֆոնդի հիմնական մասը հիմնանորոգվել է: Վարժարանում բացվել են Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ:

Այս տարի վարժարանի աշակերտները մասնակցել են առարկայական օլիմպիադաների քաղաքային փուլին, որոնցից 16-ն անցել են մարզային փուլ: Մարզային փուլը հաղթահարած աշակերտից 4-ն անցել են հանրապետական փուլ: Նրանցից մեկը գրավել է մրցանակային տեղ և ներկայացվել է կրթաթոշակի:

Մեր աշակերտները ակտիվորեն մասնակցել են «ԱՅԲ» հիմնադրամի կազմակերպած, «Մեղու», «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին և նվաճել տարբեր մրցանակներ:

Վարժարանի 137 շրջանավարտներից 102-ն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն:

Վարժարանում գործում է «Բանավեճի ակումբ», որը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքային և մարզային մրցումներին:

Վարժարանում կազմակերպվել են Մեդիագրագիտության դասեր և հակակոռուպցիոն դաստիարակությանը նվիրված միջոցառում:

Հետևողական աշխատանքներ ենք կատարում ռազմա-հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ, մասնակցում ենք ՊՄՏՀԿ-ի (ԴՕՍԱԱՖ) կազմակերպած բոլոր մրցումներին:

Վարժարանի աշակերտները որոշակի ձեռքբերումների են հասել նաև սպորտային բանագավառում:

8.2.ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՔՈԼԵՋ

Քոլեջում հաշվետու տարվա ընթացքում առկա ուսուցմամբ ընդունելություն է կատարվել 4 կրթական ծրագրերով.

- «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» (9-ամյա կրթության հիմքով 4 տարի տևողությամբ),
- «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» (9-ամյա կրթության հիմքով 4 տարի տևողությամբ),
- «Հաշվապահական հաշվառում» (9-ամյա կրթության հիմքով 3 տարի տևողությամբ),
- «Սպասարկման կազմակերպում» (12-ամյա կրթության հիմքով 2 տարի տևողությամբ):

Ընդունվել է թվով 70 ուսանող, որից 60 ուսանող՝ 9-ամյա կրթության հիմքով, իսկ 12-ամյա կրթության հիմքով՝ 10 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտել են 45 ուսանողներ, որոնցից գերազանցության դիպլոմ է ստացել «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության 1 շրջանավարտ, «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 5 շրջանավարտ: Շրջանավարտներից ԲՈՒՀԻ 2-րդ կուրսում կրթությունը շարունակում են «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսում 3 ուսանող, իսկ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության 5 շրջանավարտ՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության երկրորդ կուրսում: Շրջանավարտներից ՎՊՀ 1_-ին կուրս են ընդունվել 4 շրջանավարտ, 3 շրջանավարտ ընդունվել է ԵՊՀ , 1 շրջանավարտ Կինոյի և թատրոնի ինստիտուտ:

Մեր շրջանավարտները կարողանում են հաջողությամբ կողմնորոշվել աշխատաշուկայում (հեռուստաընկերություն, դպրոցի Արմաթ ինժեներական լաբորատորիա, ֆաբրիկայում, օպերատոր-գործավար և այլն) :



Նկար 19. Քոլեջի ուսանողների թվաքանակը 2016-2020 թթ.

Քոլեջի 191 ուսանողներից 36-ը սովորում են վճարովի համակարգում, իսկ 155-ը՝ անվճար համակարգում: Անվճար սովորող ուսանողներից 88-ը ստանում են կրթաթոշակ:



Նկար 20. Քոլեջի անվճար սովորող ուսանողների թվաքանակը 2016-2020 թթ.

Քոլեջի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ՀՀ Կառավարության որոշմամբ ստանում են կրթաթոշակ:



Նկար 21.Քոլեջի կրթաթաշակ ստացող ուսանողների թվաքանակը 2016-2020թթ.



Նկար 22. Քոլեջի շրջանավարտների թվաքանակը 2016-2020 թթ.

Կապված վճարովի համակարգում ուսանողների թվաքանակի ավելացման հետ բարելավվել է քոլեջի ֆինանսական վիճակը:Շնորհիվ նախատեսվում է ավելացնել նոր հաստիքներ:

Հաշվետու տարվա ընթացքում փոփոխված կրթական չափորոշիչների հիման վրա վերանայվել են ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, մոդուլների

ուսումնառության պլանները, ուսումնառության նյութերը, կատարման չափանիշները, գնահատման մեթոդները:

Աշխատանքներ են տարվում նաև նոր 3 մասնագիտությունների ձեռք բերման հետ կապված:

Արտադրական պրակտիկաները կազմակերպվում են Վանաձորի համայնքապետարանում, Նոտարական գրասենյակներում, Ամերիկայի դեսպանատան Վանաձորում գտնվող Ամերիկյան անկյունում, «Կիրովական» հյուրանոցում, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում, «Արկատ» ՍՊԸ-ում, Դեբետի «Սմարթ» կենտրոնում, «Ինստիգեյթ» ուսումնական կենտրոնը («Նաիրի համընկերություն» ընկերություն), «Օազիս» ՍՊԸ- ում, «ՋԵԹ ՄԻՔՍ» ընկերությունում: Ձեռք են բերվել նոր փոխհամաձայնության հուշագրեր և պայմանագրեր «Ամուր Նեթ» , «Մայ նեթ», «Սիլ ինշուրանս», Վանաձորի թիվ 2,19,30 մանկապարտեզների հետ: Ուսումնական պրակտիկաները հիմնականում կազմակերպվում են քոլեջում:

Շահառուների կարիքների վերհանման նպատակով պարբերաբար կազմակերպվում են գործատուների, շրջանավարտների ծնողների հետ հանդիպումներ քոլեջում գործող կարիերայի կենտրոնի օգնությամբ:

Աշխատակիցների և ուսանողների աջակցությամբ կատարվել են բազմաթիվ կամավորական աշխատանքներ պատերազմի օրերին: Ուսանողները ակտիվ մասնակցություն ունեն նաև քոլեջի հասարակական և մշակութային կյանքում:

Ուսանողական խորհրդի օգնությամբ կազմակերպվել է շաբաթօրյակ՝ մաքրելով քաղաքի պուրակները և Տանձուտ գետը: «էկո» խմբակի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել Վանաձորում անցկացվող մաքրապատման աշխատանքներին:

Մի շարք շնորհալի ուսանողներ մասնակցել են «Իմ 2020 թվականի ամառային արձակուրդները» թեմայով միջազգային անգլերեն շարադրության մրցույթին և ստացել են հավաստագրեր:Չնայած համաճարակային իրավիճակին, ուսանողները նաև մասնակցել են մի շարք հետաքրքիր և ուսուցողական ծրագրերի,որոնցից է «Համայնքը ես եմ» ծրագրի շրջանակներում իրականացված ձմեռային առցանց քառօրյա դպրոցը:

ՀԱՎԵԼՎԱԾ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ